

ՄԵՐ ԱՆԿԻՒՆԵՆ

Յրանդ Տինքեյն Տասը Տարիներ Ետք

2007 թուականի Յունուար 19-ին, դաւադիր գնդակի զոհ գնաց Պոլսահայ մտաւորական եւ «Ալօս» թերթի խմբագիր Յրանդ Տինքեյն: Ան, իր կեանքի ընթացքին հանդիսացաւ այն եզակի դեմքը, որ կարողացաւ թուրք հանրային կարծիքի մօտ ընդհանրապէս եւ մտաւորական խաւի մօտ մասնաւորաբար, քննարկման նիւթ դարձնել հայկական ցեղասպանութեան եւ հայ-թուրք փոխարարութիւններու զգայուն հարցերը, որոնց շուրջ արտայայտուիլը կը նկատուէր քրեականօրէն պատժելի արարք: Պետութեան կողմէ հալածանքներու ենթարկուելէ, ու բազմաթիւ անգամներ դատարանի առջեւ կանգնելէ ետք, Յրանդ Տինքեյն ենթարկուեցաւ ֆիզիքական ոչնչացման:

Տինքեյն սպանութիւնը թուրք հասարակութեան որոշ խաւերուն մօտ յառաջացուց մեծ ցնցում: Անոր մահէն ետք հազարաւորներ փողոց դուրս եկան «Բոլորս Յրանդ ենք, բոլորս Յայ ենք» պատուներ բարձրացուցած: Անցնող տասը տարիներու ընթացքին Տինքեյն գաղափարները ստացան նոր որակ: Ի հեճուկս թրքական իշխանութիւններուն, Յայկական ցեղասպանութեան մասին խօսիլը դարձեց արգիլուած նիւթ ըլլալէ: Ամէն Ապրիլ 24-ին երկրի տարածքին, հրապարակային միջոցառումներով սկսան մշտնջենական ցեղասպանութեան տարելիցը: Այս բոլորի շնորհիւ թրքահայութիւնը սկսաւ ապրիլ ինքնագիտակցութեան ու գարթօնքի նոր շրջան մը:

Այսպիսով Յրանդ Տինքեյն ողբերգական մահատակութիւնը ակելի մեծ ներգործութիւն ունեցաւ Թուրքիոյ հանրային կարծիքին մօտ, քան որ էր անոր կենդանութեան ընթացքին:

Սակայն, ներկայիս իրերու ընթացքը սկսած է քալել հակառակ ուղղութեամբ: Թուրքիոյ երկնակամարը սկսած է դարձնել մթազնիլ: Զինուորական յեղաշրջումը պատրուակ ծառայեցնելով, նախագահ Էրտողան հալածանք սկսած է իր հակառակորդներուն դէմ: Հազարաւորներ մետուած են բանտերը: Մամուլի ու խօսքի ազատութիւնները կաշկանդումի ենթարկուած են:

Ներկայիս Յրանդ Տինքեյն ուղղիւն կը շարունակէ հետեւիլ թրքական խորհրդարանի հայ անդամ Կարօ Փայլան, որ իր կեանքը եւս վտանգելու գնով, կը շարունակէ խօսիլ զգայուն հարցերու մասին:

Իր մահուան տասնամեակին առթիւ, հայութիւնը ամենուրեք կը խոնարհի Յրանդ Տինքեյն պայծառ յիշատակին առջեւ, յուսալով որ, անոր մահատակութեամբ արձանագրուած դրական տեղաշարժերը իրենց աւարտին չեն հասած:

«ՄԱՍԻՍ»

Միջազգային Կառոյցներու Նոր Քննադատութիւնները Ուղղուած Հայաստանի Իշխանութիւններուն

Անցնող շաբթուայ ընթացքին հրապարակուած երկու կարեւոր գեղոյցներ՝ միջազգային տարբեր կազմակերպութիւններու կողմէ, կը պարունակեն խիստ քննադատութիւններ Հայաստանի իշխանութիւններու հասցէին, մարդու իրաւունքներու եւ ընտրական գործընթացներուն վերաբերեալ:

Առաջին գեղոյցի հեղինակ Մարդկային Իրաւանց Հսկիչ կազմակերպութիւնը (Human Rights Watch) եկաւ յայտարարելու, որ Հայաստանի մէջ մարդու իրաւունքներու վիճակը 2016-ին մնացած է անհարթ:

Հստ կազմակերպութեան տարեկան գեղոյցին, Յուլիսին, Հայաստանի իշխանութիւնները անհամաչափ ուժ կիրառած են կառավարութեան ընդդիմացող արմատական խումբին աջակցութիւն ցուցաբերող խաղաղ ցուցարարներուն դէմ, յարձակումներ գործած են ցոյցերը լուսաբանող լրագրողներուն վրայ: Իշխանութիւնները կամայականօրէն կալանաւորած են բողոքի ցոյցի տասնեակ առաջնորդներու եւ մասնակիցներու՝ անոնց առաջադրելով անհիմն քրէական մեղադրանքներ, իսկ անոնցմէ ոմանց զրկելով կալանաւորի հիմնական իրաւունքներէն:

Յուլիս 29-ին, ոստիկանութիւնը կիրառած է խլացուցիչ նռնակներ ոստիկանութեան գրաւուած գոլնդի հարեւանութեամբ հաւաքուած խաղաղ բազմութեան նկատմամբ՝ ցուցարարներուն պատճառելով առաջին եւ երկրորդ աստիճանի այրուածքներ եւ բեկորային վնասուածքներ: Ոստիկանութիւնը չէ փորձած կիրառել բազմութեան վերահսկման առաւել նուազ խիստ միջոցներ եւ որեւէ ողջամիտ ջանք չէ գործադրած բազմութեան ցրուելու կոչ ընելու կամ ուժ կիրառելու իրենց ծրագրերու մասին նախազգուշացնելու համար:

Իշխանութիւնները հետաքննութիւն սկսած են ոստիկանութեան Յուլիս 29-ի գործողութիւնները:

Շար.ը էջ 4

Թուրքիոյ Խորհրդարանէն Ներսէն Յեղասպանութիւն Բառը Գործածելուն Համար Կարօ Փայլան Զրկուած է Երեք Նիստի Մասնակցութենէն



Թուրքիոյ խորհրդարանէն ներս սահմանադրական փոփոխութիւններով 11-րդ յօդուածի քննարկման ժամանակ, Ուրբաթ օր Էլոյթ ունեցած՝ ընդդիմադիր հայ պատգամաւոր Կարօ Փայլան անդրադարձած է 1913-1923 շրջանին Թուրքիոյ փոքրամասնութիւններու ոչնչացման: Փայլան շեշտած է, որ այդ տարիներուն հայերը, ասորիները, յոյները եւ հրեաները ցեղասպանութեան եւ բռնազաղթի ենթարկուելով, հեռացուած են այդ տարածքներէն:

Հստ հայկական «Ալօս» թերթին, Փայլանի կողմէ ցեղասպանութիւն բառը հնչելէ ետք, իշխող «Արդարութիւն եւ Զարգացում կուսակցութեան» պատգամաւորները ոտքի կանգնած ու սկսած են պոռալ անոր վրայ: Նիստը վարող մէջլիսի փոխ-խօսնակ Ահմէտ Այտըն Փայլանին պահանջած է «ուղղել» խօսքը: Փայլան, շարունակելով Էլոյթը, ըսած է. «Ժամանակին 40 տոկոս կը կազմէինք, հիմա մէկ հազարերորդ մասը կը կազմենք, ուրեմն մեր գլխուն բան մը եկած է. ես ցեղասպանութիւն անուանեմ, դուք ինչ ուզէք՝ անուանեցէք:

Եկէք անուանումը միասին որոշենք ու շարունակենք մեր ճանապարհը: Պայիս ու նախնիներուս գլխուն եկածը ես շատ լաւ գիտեմ: Եկէք դուք դրէք անուանումը եւ քննարկենք այդ մասին»:

Այս խօսքերուն հակադարձելով, իշխող կուսակցութեան պատգամաւոր Մէթին Քիւլունք գոչած է. «Այդ ցեղասպանութիւն բառը պիտի շտկուի», իսկ որոշ պատգամաւորներ շարժած են դէպի Փայլանը: Լարուածութիւնը զսպելու համար ընդմիջում յայտարարուած է, որմէ ետք շարք մը պատգամաւորներ իրենց Էլոյթին մէջ «քննադատած են» Փայլանը՝ ցեղասպանութիւն բառը խորհրդարանէն ներս օգտագործելուն համար:

Կը նշուի, որ հայ պատգամաւորին որպէս պատիժ արգիլուած է մասնակցիլ խորհրդարանի յառաջիկայ 3 նիստերուն, իսկ նիստի արձանագրութիւններէն ջնջուած է Էլոյթին մէջ արտասանուած ցեղասպանութիւն բառը:

Նիստի կայացուցած այս որոշումէն ետք Փայլան եւ HDP-ական պատգամաւորները լքած են նիստերու դահլիճը:

Վախճանած է Մեսրոպ Արքեպիսկոպոս Գրիգորեան



Գերաշնորհ Ս. Մեսրոպ Արքեպիսկոպոս Գրիգորեան

Մայր Աթոռ Ս. Էջմիածինէն ստացուած հաղորդագրութենէն կը տեղեկանանք որ, Յունուարի 14-ի, 85 տարեկանին, Աւստրիոյ մէջ վախճանած է Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ երիցագոյն միաբաններէն՝ Գերաշնորհ Ս. Մեսրոպ Արքեպիսկոպոս Գրիգորեանը:

Հանգուցեալ Սրբազանի առաջնորդութեան օրերուն աւստրիահայ գաղութի թեմը վերաշխուժացաւ: Նոր թափ ստացաւ Վիեննայի ազգային, եկեղեցական, մարզական ու մշակութային կեանքը: Առաւել եւս սերտացան հայրենիք-սփիւռք յարաբերութիւնները: Իր նախաձեռնութեամբ Եւրոպայի քրիստոնեայ տարբեր յարանուանութիւններ եւ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ միջեւ համագործակցութեան նոր հանգրուան մը բացուեցաւ: Իսկ շրջանի մտաւորականութիւնը մօտէն ծանօթացաւ ոչ միայն Հայց. Եկեղեցւոյ, այլեւ մեր ժողովուրդի պատմութեան ու անոր անժամանցելի դատին:

Վախճանեալ Սրբազան հօր կենսագրական գիծերը տեսնել աւանձին:

Սերժ Սարգսեանի Կոշտ Նախագգուշացումը Սէյրան Օհանեանին

ՅԱԿՈՔ ԲԱՂԱԵԱՆ

Պաշտպանութեան նախարար Վիգէն Սարգսեանը Հանրային հեռուստաընկերութեան եթերում յայտարարել է, որ բանակի մատակարարումները գործընթացը դարձել է առաւել թափանցիկ եւ հաշուետուողական: Սարգսեանը յայտարարել է, թէ պէտք է անել այնպէս, որ բանակից գողանալը դառնայ անհնար:

«Մենք շարունակելու ենք հատ առ հատ բացայայտել ու պատժել այն գործարարներին, որոնք ապօրինի գործունէութեամբ վնաս են հասցրել զինուած ուժերին: Հատ առ հատ բացայայտելու ենք եւ պատժելու ենք այն չինովներին, որոնք փորձել են հարստանալ բանակի մատակարարումներին: Միեւնոյն ժամանակ, պէտք է ընթացակարգերի վրայ աշխատենք, որովհետեւ քաղաքական առումով ձեռնարկ է գտնել կոնկրետ դէպք եւ պատժել, իսկ արդիւնաւետութեան առումով շատ աւելի կարեւոր է ձեւակերպել ընթացակարգ, որի միջոցով գողանալը, բանակի հաշուին ապօրինի հարստանալը պէտք է դառնայ անհնար»:

Յայտարարութիւնը կարող է նշանակել նաեւ Սերժ Սարգսեանի զգուշացումը Սէյրան Օհանեանին, որ եթէ նախկին նախարարը անցնի այսպէս ասած ընդդիմադիր քաղաքական գործունէութեան որեւէ սահման, ապա գործող նախարարը կարող է յայտնաբերել նախկինում թոյլ տրուած չարաշահումներ

տանալ բանակի մատակարարումներին հաշուին: Միեւնոյն ժամանակ, պէտք է ընթացակարգերի վրայ աշխատենք, որովհետեւ քաղաքական առումով ձեռնարկ է գտնել կոնկրետ դէպք եւ պատժել, իսկ արդիւնաւետութեան առումով շատ աւելի կարեւոր է ձեւակերպել ընթացակարգ, որի միջոցով գողանալը, բանակի հաշուին ապօրինի հարստանալը պէտք է դառնայ անհնար»:

Վիգէն Սարգսեանը փաստացի անուղղակիօրէն շօշափում է պաշտպանութեան նախկին նախարար Սէյրան Օհանեանի պաշտօնավարման ընթացքում եղած խնդիրները, ինչը բաւական ուշադրաւ է դառնում Սէյրան Օհանեանի նախընտրական յայտի ֆոնին, որ նախկին նախարարը ներկայացրեց շաբաթներ առաջ:

Սէյրան Օհանեանը յայտարարեց քաղաքականութիւն մտնելու, իշխանութեանն այլընտրանք ներկայացնելու մասին: Նա արդէն իսկ հանդէս է եկել մի քանի ֆէյսբուքյան գրառումներով, որոնցում ոչ կոշտ, բայց շօշափելի քննադատութեան է ենթարկել ներկայիս իրավիճակը, տնտեսական յարաբերութիւնները բնոյթով եւ այլն, յայտարարելով, որ պէտք է փոխել դրանք: Սէյրան Օհանեանի շուրջ ըստ ամենայնի կը ձեւաւորուի դաշինք, որին կարող է միանալ օրինակ նախկին արտգործնախարար Վարդան Օսկանեանն իր կուսակցութեամբ, կամ Սերժ Սարգսեանին կոշտ քննադատելով քաղաքականութիւն վերադարձած նրա աշխատակազմի ղեկավարի նախկին տեղակալ Վիկտոր Դալլաքյանը: Ի դէպ, Դալլաքյանը եղել է Վիգէն Սարգսեանի տեղակալը:

Սէյրան Օհանեանի դաշինքը կամ բեւեռը կարող է ներառել

նաեւ Արցախի առաջին պատերազմի մասնակիցներին, նրա մարտական ընկերներին, որոնց պարբերաբար դիմում է Օհանեանն այս կամ այն յայտարարութիւնը հեռարձակելիս:

Ահա այդ ֆոնին հնչում է պաշտպանութեան նոր նախարարի յայտարարութիւնը, որն ինչ որ իմաստով նաեւ աննախադէպ է, քանի որ Վիգէն Սարգսեանը խօսում է նախկին չարաշահումները մէկ առ մէկ, հատ առ հատ բացայայտելու մասին, դրանցում ներգրաւուած թէ գործարարներին, թէ չինովներին բացայայտելու եւ պատժելու մասին: Բանն այն է, որ Հայաստանի իշխող համակարգում սովորաբար խուսափում են այդօրինակ յատակու-

թեամբ յայտարարել, թէ մէկ առ մէկ բացայայտելու են եւ պատժելու են չարաշահում թողնուածներին, գողացողներին, վնասողներին: Սովորաբար ասում է, թէ բուն խնդիրը յետագայ չարաշահումների ճանապարհը փակելն է, իսկ մարդ բռնելով հարց չի լուծուի:

Կամ, ինչպէս բոլորովին թարմ օրինակով կարէն Կարապետեանը յայտարարեց, «ինձ միլիցիա մի դարձրէ՛ք»: Վիգէն Սարգսեանը փաստօրէն չի ասում, թէ «իրեն միլիցիա պէտք չէ դարձնել»: Նա յայտարարում է, որ պատրաստ է դառնալ «միլիցիա»:

Ահա այդ իմաստով, յայտարարութիւնը կարող է նշանակել նաեւ Սերժ Սարգսեանի զգուշացումը Սէյրան Օհանեանին, որ եթէ նախկին նախարարը անցնի այսպէս ասած ընդդիմադիր քաղաքական գործունէութեան որեւէ սահման, ապա գործող նախարարը կարող է յայտնաբերել նախկինում թողնուած չարաշահումներ, յուրացումներ, որոնք խնդրահարկ կարող են լինել Օհանեանի համար, առնուազն որպէս գերատեսչութեան ղեկավար, որտեղ թոյլ է տրուել այդ ամէնը:

Միեւնոյն ժամանակ, Վիգէն Սարգսեանի յայտարարութիւնն ունի այլ ուշադրով համատեքստ էլ, եւ այն թերեւս նախագգուշում կամ զգուշացում է ոչ միայն Սէյրան Օհանեանին, այլ նաեւ պաշտպանական գերատեսչութեան բոլոր այն պաշտօնեաներին եւ նաեւ այդ գերատեսչութեան հետ գործ ունեցած այն գործարարներին, որոնք կարող են մտածել նախընտրական շրջանում Սէյրան Օհանեանին «բարեկամաբար» այս կամ այն կերպ որեւէ օժանդակութիւն ցուցաբերելու մասին:

«ԼՐԱԳԻՐ»

ՀՀԿ-ն Կը Գնայ Դաշինքով, Ինչպէս Միշտ

ԱՐԱՍ ԱՍԱՏՈՒՄԻ

Խորհրդարանի ընտրութեանը ՀՀԿ-ի մասնակցութեան ձեւաչափի վերաբերեալ քննարկումները կամ գնահատականները՝ արդեօք ՀՀԿ-ն դաշինքով կը գնայ, թէ՞ կը գնայ միայնակ, ինչ-որ առումով արհեստական են: ՀՀԿ-ն գուտ ֆորմալ առումով է կուսակցութիւն, իսկ բնոյթով այն դաշինք է, որը ձեւաւորուած է իշխանութեան իւրացման գաղափարի շուրջ, եւ արդէն մօտ երկու տասնամեակ այդ դաշինքը պահում է իշխանութիւնը՝ ի հեճուկս Հայաստանի Սահմանադրութեան, օրէնքների եւ հանրութեան կամքի:

Այդ տեսանկիւնից ՀՀԿ-ն 1998 թուականից ի վեր բոլոր համապետական ընտրութիւններին մասնակցել է դաշինքի սկզբունքով, այսինքն՝ ձեռով որպէս կուսակցութիւն, բայց իրականում որպէս դաշինք: Իհարկէ, դա այն դաշինքը չէ, որը ներառում է իշխանական ամբողջ պալիտրան, ամբողջ սպեկտրը, սակայն կազմում է առանցքը:

Այս տեսանկիւնից հարցը պարզ է, եւ այս համապետական ընտրութեանն էլ ՀՀԿ-ն կը մասնակցի որպէս դաշինք, կուսակցութեան ցուցանակի ներքոյ: Աւելին, ներկայիս իրավիճակում ՀՀԿ-ն առաւել եւս դաշինք է՝ հաշուի առնելով ներիշխանական մի շարք իրողութիւններ, որոնք բնորոշուում են շահերի համար թէժացած պայքարով:

Խնդիրն այն է, որ ՀՀԿ ներսում բացարձակապէս գոյութիւն չունեն պետութեան զարգացման վերաբերեալ միասնական պատկերացումներ, ընդ որում՝ նոյնիսկ ոչ արժէքային կամ գաղափարական, այլ թէկուզ մարտավարական միջնաժամկէտ մակարդակի ընդհանրական պատկերացումներ:

Այստեղ կայ մէկ խնդիր, որ կազմում է ՀՀԿ նախընտրական «ցեմենտը». դա հաւաքական անվտանգութեան նուազագոյն խնդիրն է, այլապէս ՀՀԿ-ն անգամ իշխանութեան կուսակցութիւն մնալու պարագայում այսօր իսկ կարող էր մասնատուել մի քանի մասի: Նաեւ այդ, այսինքն՝ դաշինքային բնոյթն է պատճառը, որ որեւէ կուսակցութեան համար գործնականում անհնար է դառնում ՀՀԿ-ի դէմ գուտ կուսակցական հնարաւորութեամբ պայքարը:

Բանն այստեղ միայն տնտեսական ռեսուրսների ֆիզիքական ծաւալը կամ դրանց գոյացման իշխանական լծակները չէ: Խնդիրը տուեալ պարագայում միաժամանակ աւելի լայն է ու խորը եւ առնչում է Հայաստանում քաղաքական կեանքի մոտիւլացիոն հիմքին:

Առաջին հայեացքից թւում է, թէ ՀՀԿ-ն Հայաստանում փոքրամասնութիւն է եւ վերարտադ-

րիւմ է հասարակական կամքին հակառակ: Իրականում, գուտ ֆիզիքական ծաւալներով, ՀՀԿ-ն իսկապէս փոքրամասնութիւն է, սակայն իր դաշինքային բնոյթով այն կազմում է մեծամասնութիւն: Այսինքն՝ որպէս ընդհանուր շահ գտած եւ ձեւակերպած խմբերի միաւորում ՀՀԿ-ն ամենամեծ դաշինքն է: Այլ հարց է, թէ ինչպիսի յարաբերակցութիւն ունի այդ շահը հասարակական եւ պետական շահի ու անվտանգութեան, զարգացման հրամայականների եւ հեռանկարների հետ: Իհարկէ, չունի ոչ մի ընդհանրութիւն եւ ունի բազմաթիւ հակասութիւններ, ինչի հետեւանքն էլ Հայաստանի ներկայիս, մեղմ ասած, անմխիթար վիճակն է:

Սակայն փաստն այն է, եւ Հայաստանի համար, իհարկէ, վտանգաւոր փաստը, որ ՀՀԿ-ն ընդհանուր շահը ձեւակերպած եւ սպասարկող ամենամեծ դաշինքն է, եւ թէեւ գուտ անընդունելիութեան առումով ՀՀԿ-ն Հայաստանում անցանկալի, մերժելի է հանրութեան բացարձակ մեծամասնութեան համար, սակայն այդ մեծամասնութիւնը շարունակելու է լինել ՀՀԿ հանդէպ «ենթակայ»՝ ի կարգավիճակում, եւ Հայաստանն էլ շարունակելու է ենթարկվել ՀՀԿ-ի աւելի ու աւելի մեծացող ուսկին ու վտանգին, քանի դեռ չի ձեւաւորուի առաւել մեծ հանրային շրջանակ ընդգրկող եւ դրա հիմքում որակապէս այլ շահի եւ անվտանգութեան գաղափար ձեւակերպող ու սպասարկող քաղաքական նոր դաշինք:

«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»



ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ
 ՊԱՇՏՏՈՆԱԹԵՐԹ՝
 ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՅՆՁՍԱԿԵԱՆ
 ԿՈՒՄԱԿՑՈՒԹԵԱՆ
 Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
 ՎԱՅԷԱՋԱՊԱՅԵԱՆ

MASSIS Weekly
 Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
 1060 N. Allen Ave.
 Pasadena, CA 91104
 Phone: (626) 797-7680
 Fax: (626) 797-6863
 E-Mail: massis2@earthlink.net
 http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
 Published Weekly
 Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
 USA \$50.00, \$100.00 (First Class)
 Canada \$125.00 (Air Mail)
 Overseas \$250.00 (Air Mail).
 All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
 at Pasadena CA.
 Please Send Address Change To
MASSIS WEEKLY

Հրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժնէր հոն արտայայտուող բոլոր միտքերը

www.massispost.com

daily news updates

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վարչապետ Կարեն Կարապետեանի Մամլոյ Ասուլիսը Կառավարութեան Գործունէութեան Հարիւր Օրուայ Առթիւ

Վարչապետ Կարեն Կարապետեան յայտարարեց, որ եթէ հնարաւորութիւն չ'ունենայ, 2018-էն յետոյ վարչապետ չ'ըլլար:

Ըստ նոր Մասնադրութեան, 2018-ի Ապրիլէն յետոյ վարչապետը պէտք է ոչ միայն ըլլայ Հայաստանի քաղաքացի, այլեւ վերջին չորս տարիներուն մշտապէս բնակած ըլլայ Հանրապետութեան մէջ:



ՀՀ Վարչապետ Կարեն Կարապետեան

«18 թուին էլ, գայ՝ կը խօսանք: Կը լինեմ ես վարչապետ, չեմ լինի վարչապետ՝ ամենաշատ յուզող հարցը Ձեզ այս պահին դա՞ է: Յստակութիւն կայ, գնում ենք առաջ: Եթէ հնարաւորութիւն չեմ ունենայ, ուրեմն՝ չեմ լինի: Տրամադրուած եմ լինեմ, եթէ էֆեկտիւ աշխատենք՝ այո, եթէ էֆեկտիւ աշխատենք եւ ապրիլեան այս ընտրութիւնները Հանրապետականը յաղթի», - արձագանքեց վարչապետը՝ աւելցնելով. «Վերջին հինգ տարիներին Հայաստանի Հանրապետութեան քաղաքացի եմ, ապրել եմ Երեւանից դուրս: Համապատասխանում է իմ ապրելու օրերի քանակի սահմանափակումը, որ պէտք լինեմ Հանրապետական կուսակցութեան ցուցակում, թէ՞ չէ՞՝ այդ հարցի պատասխանը չգիտեմ, բայց եթէ չի համապատասխանում, ապա ես ցուցակում չեմ լինելու»:

Կարապետեան ամփոփելով իր գլխաւորած կառավարութեան հարիւր օրը, ըսաւ. «Մեր տնտեսութիւնը, ես ասել եմ, գտնուում է ծանր վիճակում: Երեք ամսուայ մէջ կորուկ փոփոխութիւններ եղել են: Մենք ձեզ ներկայացրել ենք մեր փոփոխութիւնները: Դուք կարող էք յետոյ ընթերցել, ըստ դրա գնահատել՝ կորուկ է, թէ՞ կորուկ

չէ: Բայց ես ձեզ բոլորին խնդրում եմ, որպէսզի դուք հասկանաք, որ տնտեսութիւնը, այս մեծ համակարգը մի օրուայ մէջ փոփոխելու հնարաւորութիւնը չկայ: Համոզուած եմ, որ մենք գնում ենք ճիշդ ուղղութեամբ:

Կարապետեանին նաեւ հարցուցին դարաբաղեան կարգաւորման մասին՝ արդեօք կո՞ղմ է տարածքներ խաղաղութեան դիմաց տարբերակին:

Վարչապետը պատասխանեց. - «Ձէ, ես դրա կողմնակիցը չեմ: Ես վստահ եմ, որ մենք ունենք տարբերակ, երբ որ մեր ինքնասիրութիւնը, մեր անվտանգութիւնը, մեր յաղթանակը մենք կարող ենք պաշտպանել, պահել համապատասխան տրամաբանական բանակցութիւններ իրար հետ: Եկէք, երբ որ գայ պահ... Փոխզիջումը ոչ միայն տարածք է, չէ՞: Փոխզիջումը կարգավիճակ է, փոխզիջումը տարբեր բաներ են: Ես չեմ կարծում, որ որեւիցէ մէկը Հայաստանի Հանրապետութիւնում որոշում կայացնող լինի իր վրայ այդ պատասխանատուութիւնը լինի, կը կայացնի մի որոշում, որի հետ մեր ազգը, մեր քաղաքացիները համաձայն չեն լինելու: Դա այնպիսի մեծ պատասխանատուութիւն է, որ ես չեմ տեսնում այդ մարդուն, որը կարող է իր նորմերը խախտի, գնայ դրան»:

Իշխանութիւնը Ընդունեց Գողութեան Փաստը

«Վերջերս վարչապետի եւ պաշտպանութեան նախարարի ըրած յայտարարութիւններէն պարզ է կը դառնայ, որ խոստովանած են՝ նախապէս պաշտօնեաներու կողմէ պետական միջոցներու իւրացում տեղի ունեցած է, բայց իրաւապահները չեն արձագանքած այս յայտարարութիւններուն», յայտնեց Հելսինկեան քաղաքացիական ժողովի Վանաձորի գրասենեակի ղեկավար Արթուր Սաքունց:

Պաշտպանութեան նախարար Վիգէն Սարգսեան յայտարարեց, որ բանակի հաշուին հարստանալը պէտք է ըլլայ անհնար, իսկ վարչապետ Կարեն Կարապետեան ակնարկեց, որ պէտք է սպասել, թէ նախկինի չարաշահումները թոյլ տուած պաշտօնեաներուն պէտք է կախաղան բարձրացնեն:

«Արձանագրում ենք, որ վարչապետի ու նախարարի մակարդակով ընդունում են գողութեան, հանրային միջոցների իւրացման, պաշտօնէական դիրքի օգտագործմամբ որոշակի պիւնտային միջոցներ իւրացման փաստը: Կարենը հանգամանք է, որ երկար ժամանակ լրատուական միջոցներով, ամենատարբեր աղբիւրներով կողուպցիայի վերաբերեալ հարոր-



Հելսինկեան քաղաքացիական ժողովի Վանաձորի գրասենեակի ղեկավար Արթուր Սաքունց

դումների պատկերի արդիւնքում մարդիկ ըստ հույսերու յայտարարում են գողութեան փաստը», - ըսաւ Սաքունց:

Ստեղծուած իրավիճակին մէջ, ըստ անոր, շատ պարզ լուծում կայ՝ օրէնքին առջեւ բոլորին հաւասար պատասխանատուութեան սկզբունքը պէտք է գործէ: Եթէ քաղաքացիներու նկատմամբ քրէական գործեր յարուցուած են, շատ յաճախ մարդիկ ոչ հիմնաւոր պատասխանատուութեան կ'ենթարկուին ու-

Գագիկ Ծառուկեան Կը Վերաբանայ Իր Քաղաքական Գործունէութեան Էջը

Սերժ Սարգսեանի հետ առճակատումէն երկու տարի անց՝ Յունուար 17-ն հանդէս գալով հեռուստաուղերձով «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան նախկին առաջնորդ Գագիկ Ծառուկեան վերջապէս հրապարակեց որոշումը, թէ կը վերադառնայ քաղաքականութիւն. «2017 թուականի խորհրդարանական ընտրութիւնները ճակատագրական են լինելու Հայաստանի ապագայի համար: Նկատի ունենալով մեր երկրի առջեւ ծառայած ներքին եւ արտաքին մարտահրաւէրները, ինչպէս նաեւ իմ քաղաքականութիւն վերադառնալու հանրային պահանջը, ես յայտարարում եմ, որ բացում եմ քաղաքական գործունէութեան փակուած էջը եւ մասնակցելու եմ 2017 թուականի խորհրդարանական ընտրութիւններին՝ ձեւաւորելով լայն դաշինք»:

Միաժամանակ, սակայն, Ծառուկեան չյտակացուց, թէ մասնաւորապէս ինչ ուժերու, որուն հետ մտադիր է դաշինք կազմել, կամ արդեօք ինք կրկին պիտի գլխաւորէ «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութիւնը:

2015-ի փետրուարին Սերժ Սարգսեանի՝ իր հասցէին վիրաւորանքներով լեցուն ելոյթէն յետոյ Ծառուկեան ըսած էր. «Իմ կեանքի ամենամեծ գործն այժմ ես համարում եմ չարիքի իշխանութիւնից Հայաստանն ազատելը»:

Այսօրուան ելոյթով մեծահարուստ գործարարը քննադատած է երկրին մէջ ստեղծուած վիճակը, բայց՝ առանց մեղաւորներ մատնանշելու. «Ես գերծ կը մնայի քաղաքական գործընթացներին մասնակցելուց, եթէ տեսնէի ու վստահ լինէի, որ մեր երկիրը ընթանում է ճիշդ ճանապարհով, տնտեսութիւնը զարգանում է, որ



Բարգաւաճ Հայաստան կուսակցութեան նախկին առաջնորդ Գագիկ Ծառուկեան

ժողովրդի բարեկեցութեան մակարդակը բարձրանում է: Ցաւօք, ունենք մեծ չափերի հասնող արտագաղթ, թոյլ ու հիւանդ տնտեսութիւն, աղքատութեան անընդհատ աճ, բարձր չափերի հասնող գործազրկութիւն եւ ապագայի նկատմամբ անվստահութիւն»:

Երկու տարի առաջ Լեւոն Տէր-Պետրոսեանի եւ Բաֆֆի Յովհաննիսեանի հետ դաշինք կազմած Ծառուկեան կոչ ըրած էր հասնիլ Սերժ Սարգսեանի պաշտօնանկութեան: «Ձեմ ափսոսում, որ քաղաքական զարգացումների այդ փուլում, երբ ակնյայտ էր ժողովրդի անվերապահ աջակցութիւնը, ընդունակ եղանք կայացնել ճիշդ որոշում՝ խուսափելով արեւահեղութիւնից եւ անդառնալի կորուստներից, հարուածի տակ չդրեցինք Հայաստանի եւ Արցախի կայութիւնն ու անվտանգութիւնը»:

Իշխող Հանրապետականը, որ Սերժ Սարգսեանի շուրթերով «չարիք» եւ «կեղծ քաղաքական երեւոյթ» որակած էր Ծառուկեանին, այժմ խնդիր չի տեսնւր, որ ան

«Համախմբում», «Երրորդ Հանրապետութիւն» Եւ ՀԴԿ Դաշինքը

«Համախմբում», «Երրորդ հանրապետութիւն» եւ Հայաստանի Դեմոկրատական կուսակցութիւնները յառաջիկայ խորհրդարանական ընտրութիւններուն պիտի մասնակցին դաշինքով:

Այդ մասին երեք կուսակցութիւնները ազդարարեցին համատեղ տարածած յայտարարութեամբ, ուր ըսուած է. «Համագործակցութեան համաձայնագիր» մէջ նշուած է. «Համոզուած լինելով, որ հասարակական-քաղաքական ու սոցիալ-տնտեսական ոլորտներում համակարգային փոփոխութիւնների հասնելը քաղաքական օրակարգի թիւ մէկ հարցն է, գիտակցելով իւրաքանչիւրիս անհատական եւ հաւաքական պատասխանատուութիւնն ու իրավիճակի ողջ լրջութիւնը, կաշկանդուած չլինելով կուսակցական-հատուածական շահերով, մի կողմ դնելով առանձին հարցերի

լուծման շուրջ պատկերացումների առանձնաչափութիւնները եւ առաջնորդութեամբ միասնաբար գործելու հանրային պահանջով, ունենալով մեր երկիրն այս վիճակից դուրս բերելու յստակ պատկերացումներ եւ իրականացուելիք քայլերի յստակ ժամանակացույց, հաշուի առնելով յառաջիկայ խորհրդարանական ընտրութիւնների գերկարեւորութիւնը, ընդունելով, որ Հայաստանում նոր օրակի իշխանութեան ձեւաւորումը հանրութեան ճնշող մեծամասնութեան պահանջն է, եւ այդ պահանջը հնարաւոր է իրականացնել հասարակական-քաղաքական լայն համախմբման միջոցով՝ յայտարարում ենք մեր ընդհանուր մօտեցումների եւ համատեղ աշխատելու պատրաստակամութեան մասին՝ Ազգային ժողովի ընտրութիւնների ժամանակ ակնկալելով ժողովրդի վստահութեան քուէն»:

րիշի անձնական գոյքի նկատմամբ ոտնձգութիւններու հիմքով, ապա հանրային աղբիւրներու, պետական միջոցներու նկատմամբ ոտնձգութիւններու գործերով առաւել եւս պէտք է պատասխանատուութեան ենթարկուին պաշտօնական անձինք:

քրէօրէն յետապնդուի: Այսինքն՝ այստեղ անելիք ունեն Գլխաւոր դատախազութիւնն ու Յատուկ քննչական ծառայութիւնը, որոնք զարմանալիօրէն մնում են այսպիսի նախարարի եւ վարչապետի մակարդակով հնչեցուած յայտարարութիւնների վերաբերեալ: Նաեւ վերահսկիչ պալատը պէտք է այս հարցում բաւական ակտիւ լինէր», - ըսած է Արթուր Սաքունց:

ԼՈՒՐԵՐ

«Պելլառուսն Ու Ղազախստանը Դեմ Են ԶԱՊԿ-ի Քարտուղարի Պաշտօնին Զայաստանի Ներկայացուցչի Նշանակման

Ամերիկեան «Սթրաթֆոր» վերլուծական կեդրոնը Հաւաքական Անվտանգութեան Պայմանագրի Կազմակերպութեան (ՀԱՊԿ) վերաբերեալ վերլուծական յօդուած հրատարակած է, որուն մէջ, մասնաւորապէս, նշուած է, թէ Պելլառուսն ու Ղազախստանը պատրաստ չեն կազմակերպութեան գլխաւոր քարտուղարի պաշտօնին տեսնել Հայաստանի ներկայացուցչի:

«Արեւմուտքի 2016-ի տնտեսական եւ քաղաքական ճգնաժամը նոր հեռանկարներ բացաւ Ռուսիոյ համար, Մոսկուա ուժեղացուց իր ազդեցութիւնը յետխորհրդային տարածքին մէջ: Վերջին մի քանի ամիսներուն Ռուսիա նոր ռազմաքաղաքական համաձայնագրեր կնքեց Պելլառուսի, Հայաստանի, Ղազախստանի եւ Տաջիկաստանի հետ: Սակայն, Ռուսիոյ յաջողութիւնը չի նշանակեր ՀԱՊԿ-ի յաջողութիւնը, որ ի սկզբանէ ստեղծուած էր որպէս հակակշիռ ՆԱՏՕ-ին», - գրած է «Սթրաթֆոր»:

Յօդուածագիրը թուարկած է ՀԱՊԿ-ի առկայ տարաձայնութիւններէն մի քանին, այդ կարգին նաեւ, որ անդամ երկիրներու ղեկավարներուն երկու անգամ չէ յաջողուած համաձայնութեան գալ ՀԱՊԿ-ի նոր գլխաւոր քարտուղարի նշանակման հարցով:

Հոկտեմբերին Երեւան կայացած՝ ՀԱՊԿ-ի գագաթնաժողովէն բացակայած էր Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբայեւ, իսկ Դեկտեմբերին կայացած Սան Փեթերսպուրկի գագաթնաժողովին՝ Ալեքսանդր Լուքաշենկօ: «Անոնց բացակայութիւնները, որոշ տուեալներով, պատահական չէին», -

նկատած է ամերիկեան վերլուծական կեդրոնը:

Ըստ հրատարակման, Ռուսիա «կարծես թէ» խոստացած է Հայաստանին, որ վերջինիս ներկայացուցիչը պիտի զբաղեցնէ ՀԱՊԿ-ի գլխաւոր քարտուղարի պաշտօնը:

Անցեալ Դեկտեմբերին Սան Փեթերսպուրկի մէջ որոշում կայացած էր, որ Նիկոլայ Բորդիւժա հեռանայ պաշտօնէն: Անոր փոխարէն գլխաւոր քարտուղարի պաշտօնակատար նշանակուած էր Բորդիւժայի տեղակալ Վալերի Սեմերիկով: «Սթրաթֆոր» կը շարունակէ՝ այդ բոլոր տարաձայնութիւններու հետեւանքով կազմակերպութիւնը չի քանդուիր, սակայն «հաստատ» կը թուլանայ:

Ռուս յայտնի վերլուծաբան Պաուէլ Ֆելքենգուերը համաձայն է «Սթրաթֆոր»-ի վերլուծութեան հետ: Անոր կարծիքով եւս ՀԱՊԿ-ը ՆԱՏՕ չէ: Իրականին, ՀԱՊԿ-ը պետութեան մը շուրջ ձեւաւորուած միութիւն է, նկատած է ռուս վերլուծաբանը: Անոր կարծիքով, Հայաստանի ներկայացուցչի նշանակման համար հիմնական խոչընդոտը Ղազախստանի նախագահն է, քանի որ Աստանայի համար Պաքու, յատկապէս կենսաւթային հարցերով, չափազանց կարեւոր գործընկեր է:

Ինչ կը վերաբերի Պելլառուսին, ռուսի փորձագէտի կարծիքով, նախագահ Լուքաշենկօ եւս կը կարեւորէ յարաբերութիւնները Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ: «Սակայն, Լուքաշենկօյի համոզելը աւելի դիւրին է Մոսկուայի համար, քան Նազարբայեւին», - նկատած է Պաուէլ Ֆելքենգուերը

Լավրովի Պատասխանը Ցնցում Յառաջացուցած Է Ատրպէյճանի Մէջ

Ռուսիոյ արտաքին գործերու նախարար Սերգէյ Լավրովի մամուլի ասուլիսը իսկական ցնցում առաջացուցած է Ատրպէյճանի մէջ: Պատասխանելով ատրպէյճանցի լրագրողի հարցին՝ Լավրով ըսած է, որ Ղարաբաղի իրավիճակն ու ռազմական գործողութիւնները Ատրպէյճանի ներքին գործը չեն:

Ան կտրուկ յայտարարած է, որ զարաբաղեան խնդիրը ուժային լուծում չունի, որ Ռուսիա 2011 թուականէն հանդէս եկած է միջադէպերու հետաքննութեան մեքենակառութիւններու ներդրման օգտին:

Փաստացիօրէն, Լավրով ոչ միայն մերժած է ուժային լուծման Ատրպէյճանի իրաւունքը, այլ նաեւ նախատած Պաքուն, որ չի համաձայնիր Ղարաբաղի վերջնական կարգավիճակին, որուն պատճառով հարցը չի լուծուիր:

Լավրովի յայտարարութիւնը Պաքուի մէջ ցնցում յառաջացուցած է, իսկ ատրպէյճանական լրատուամիջոցները սկսած են արդարացումներ փնտրել անոր: Մասնաւորապէս, haqqin.az-ը գրած է, որ Լավրովի այդ պատասխանը սաղորած են ատրպէյճանցի լրագրողները:

Յատկանշական է, ոչ միայն Լավրովի արձագանքը՝ չնայած ան առանձնապատուկ յարաբերութիւններ ունի Ատրպէյճանի հետ: Մի քանի տարի առաջ այդ յարաբերութիւնները խիստ սրած էին, երբ Պաքուի մէջ Փութինի ներկայութեամբ Սերգէյ Լավրովին «սխալմամբ» անպարկեշտ թրքական բա-



Ռուսիոյ արտաքին գործերու նախարար Սերգէյ Լավրով

ռով դիմեցին: Այն ժամանակ շատ կը գրէին Լավրովի հայկական ծագման եւ անոր նկատմամբ Ալիեւի հակակրանքի մասին:

Հետաքրքրական է, որ Ատրպէյճան կը բարձրացնէ «հակահարեկական գործողութեան» գաղափարը Մոսկուայի մէջ: Կարելի է ենթադրել, որ Ատրպէյճան անոր համար կը փորձէ հասնիլ Երեւանի ԵԱՀԿ գրասենեակի փակման եւ չի համաձայնիր հետաքննութիւններու մեքենակառութիւններու ներդրմանն ու ԵԱՀԿ լիազօրագրի ընդլայնման:

Ըստ ամենայնի, Ատրպէյճան չէ մոռցած, որ խորհրդային ժամանակաշրջանին Ռուսիոյ հետ համատեղ Ղարաբաղի մէջ պատժիչ գործողութիւններ իրագործած է: Արդեօք Պաքու ներկային ալ այդ «իրաւունք» կ'ուզէ ստանալ:

«Կարէն Կարապետեանի՝ Ցուցակում Լինել-Չլինելու Հարցը Ներքին Պայքարի Նշաններ Է Ցոյց Տալիս», - Քաղաքագէտ

«Փառլամենթական մոտելը խաղի կանոններն ամբողջովին փոխել է, ու Հայաստանի նախկին փորձը, երբ նախագահական ընտրութիւններն էին դառնում իշխանութեան ձեւաւորման գլխաւոր գործընթացը, ու դրա միջոցով էլ հնարաւոր էր գալ իշխանութեան, ամբողջովին փոխուում է: Եթէ նախկինում հնարաւոր էր մէկ հոգով թեկնածութիւն առաջադրել ու մարտահրաւէր նետել իշխանութեանը, ապա հիմա դա ամբողջովին փոխուում է: Ընտրական համակարգը ստիպում է, որպէսզի խոշոր թիմային աշխատանք կատարուի: Նախկինում Վազգէն Մանուկեանը, Տէմիրճեանը, Լեւոն Տէր-Պետրոսեանը, Բաֆֆի Յովհաննիսեանն անհատական մակարդակով են կարողացել դա անել, իսկ

այսօր դա ընդհանրապէս հնարաւոր չէ», - այսօր կազմակերպուած «Ներքաղաքական վերադասաւորումներն ու զարգացումները խորհրդարանական ընտրութիւններուն ընդառաջ» թեմայով քննարկման ժամանակ յայտնեց քաղաքագէտ Արմէն Գրիգորեան:

Անոր խօսքով՝ իրավիճակը պիտի թեժանայ, երբ քարոզարշաւը սկսի: Քաղաքագէտը ընդգծեց, որ, թէեւ իշխող կուսակցութիւնը կը գտնուի բարձրագոյն դիրքերով վրայ, բայց ներսն ալ խնդիրներ կան. «Նոյնիսկ Կարէն Կարապետեանի՝ ցուցակում լինել-չլինելու հարցը ներքին պայքարի նշաններ է ցոյց տալիս: Եթէ ընդդիմութիւնն աւելի խելամիտ ու կազմակերպուած լինի, կարող է բազում առաւելութիւններ ձեռք բերել»:

տարածքային համակարգով մասնակցող թեկնածուներու բաց ցուցակը: Ընտրողը կրնայ ընտրել ինչպէս կուսակցութիւնը, այնպէս ալ ընտրութիւն կատարել տարածքային ցուցակով առաջադրուած թեկնածուներուն միջեւ:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի կարծիքով նոր ընտրական օրինագիծը այնքան բարդ է որ կը շեղի մաքուր համամասնական ընտրութիւններու գաղափարէն:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ն իր գեկոյցով խորհուրդ կու տայ, որ Ապրիլի 2-ին խորհրդարանական ընտրութիւնները դիտարկուին ԵԱՀԿ դիտորդական առաքելութեան 24 երկարաժամկէտ, իսկ բուն ընտրութիւններու օրը՝ 250 կարճաժամկէտ դիտորդներու կողմէ:

Բանակի Հաշուին Հարստանալը Պէտք Է Դառնայ Անհնար, - Վիգէն Սարգսեան

Գողութիւնը, բանակի հաշուին ապօրինի հարստանալը պէտք է դառնայ անհնար: Այս մասին Հանրային հեռուստաընկերութեան «Օրակարգից դուրս» հաղորդման ժամանակ ըսած է ՀՀ պաշտպանութեան նախարար Վիգէն Սարգսեան՝ նշելով, որ անոր համար անհրաժեշտ է ներդնել համապատասխան ընթացակարգեր: «Հանրապետութեան նախագահի վերահսկողական ծառայութեան կողմից բացառապէս չարաշահումներից յետոյ հետեւութիւններ են արուել, բանակին մատակարարումներ անող ընկերութիւնների հետ աշխատանքը դարձել է աւելի բաց ու թափանցիկ: Մենք շահագրգիռ ենք, որ բոլոր ապրանքատեսակները հնարաւորինս ցածր գնով ստանանք, բայց բարձր որակով: Մենք շարունակելու ենք այդ քայլերը: Կարծում եմ՝ այն գործարարները, որոնք բանակի հետ աշխատում են, արդէն զգացել են այդ քաղաքականութեան ազդեցութիւնը: Այս ամիսների ընթացքում կտրուկ նուազել է բանակին թերի մատակարարումների ծաւալը, որը,



ՀՀ պաշտպանութեան նախարար Վիգէն Սարգսեան

ցաւօք սրտի, բաւականին մեծ էր: Գնային առումով զգալիօրէն բարձրացել է նոր կնքուած պայմանագրերի արդիւնաւէտութիւնը», - նշած է նախարարը:

Վիգէն Սարգսեանի խօսքով՝ ասոր զուգահեռ կը շարունակուին խախտումներ կատարած գործարարներուն ու «չինովիւններ»ուն պատասխանատուութեան ենթարկելու գործողութիւնները:

Միջազգային Կառոյցներու Զեկոյները

Շարունակուած էջ 1-էն

ներու առիթով: Աշխատանքէն ազատած է Երեւանի ոստիկանապետը, կասեցուած են չորս սպաներու լիազօրութիւնները մինչեւ քննութեան աւարտը, 13 ծառայող ստացած է նկատողութիւն:

Իշխանութիւնները գրկած են ձերբակալուածներէն շատերուն իրենց տարրական իրաւունքներէն, որոնց շարքին իրենց ընտրութեամբ անյայտալի փաստաբան հրաւիրելու եւ հարազատներուն իրենց կալանաւորման եւ գտնուելու վայրի մասին տեղեկացնելու հնարաւորութեան:

Բացառիկ Հանդիպում Հայաստանում Ձեւաւորուած «Ելք» Դաշինքի հետ

Լոս Անջելեսում են գտնուում Հայաստանի Հանրապետութիւնում ձեւաւորուած առաջին ընդդիմադիր դաշինքի ներկայացուցիչները՝ «Լուսաւոր Հայաստան» կուսակցութեան նախագահ, ՀՀ ԱԺ պատգամաւոր Էդմոն Մարութեանի եւ «Հանրապետութիւն» կուսակցութեան նախագահ, ՀՀ նախկին վարչապետ Արամ Սարգսեանի գլխաւորութեամբ:

2017 թ.-ի Ապրիլի 2-ի ՀՀ խորհրդարանական ընտրութիւններէից առաջ նորաստեղծ դաշինքը ցանկանում է իր հանդիպումներն սկսել հայաստանի Լոս Անջելեսից, որպէսզի այսուհետ սփիւռքահայերի ձայնը, մտահոգութիւններն ու առաջարկութիւնները լսելի լինի ՀՀ Ազգային ժողովում: Այդ նպատակով ստեղծուած կազմակերպիչ մարմինը Յունուարի 27-ին, երեկոյան 6.30-ին, նախատեսուած է մեծ հանդիպում Իրանահայ Միութիւնում (հասցէն՝ 117 S Louise St, Glendale, CA 91205 Armenian Society of Los Angeles):

Օրուայ խորագիրն է լինելու «Հայաստանի միակ Ելք», ուր ներկաները կարող են հանդէս գալ իրենց առաջարկութիւններով ու մտահոգութիւններով: Նմանօրինակ, եզակի հանդիպումները լաւագոյն խթանն են Հայրենիք-Սփիւռք կապերի զարգացման, համընդհանուր ջանքերով հայրենիքի շէնսցման:

ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ ՄԱՐՄԻՆ

«Զինուած Խումբի» Գործով Դատավարութիւնը «Շոու է»



Երեւանի Կեդրոն եւ Նորք Մարաշ վարչական շրջաններու ընդհանուր իրաւասութեան դատարանին մէջ, Յունուար 13-ին, հերթական անգամ յետաձգուեցաւ «Զինուած խումբի» գործով դատական նիստը:

Դատարանը յայտարարեց, որ Արդարադատութեան նախարարութեանէն յայտնած են, որ վահան Շիրիանեան հրաժարած է դուրս գալ եւ ուղեկցուիլ դատարան: Վահան Շիրիանեանի շահերու պաշտպան Հայկ Ալուսեան յայտարարեց, որ բժշկական ծառայութեան կողմէ կազմուած տեղեկանքը, որ ներկայացուած է դատարանին, չի համապատասխանէր իրականութեան, քանի որ արդէն մի քանի ամիսէ ան անկողնային հիւանդ է: Հայկ Ալուսեանը նշեց, որ դատարանը պէտք է բժշկական փաստաթուղթ պահանջէ Շիրիանեանի առողջական վիճակին մասին՝ նշելով, որ այդ փաստաթուղթը իրեն չէ տրամադրուած:

Ամբաստանեալներէն Նելլի Մինասեանի շահերու պաշտպան Ինեսսա Պետրոսեան նշեց, որ արհեստականօրէն յետաձգուած են դատական նիստերը: Ան նշեց, որ ՔԿՀ-ի վատ աշխատանքի պատճառով բոլորին իրաւունքները խախտուած են:

Նշենք, որ դատական նիստը յետաձգելու որոշումը բարկացուց գործով ամբաստանեալներ Խաչիկ Աւետիսեանը եւ Արթուր Վարդանեանը: Դատական նիստի վերջը Խաչիկ Աւետիսեան յայտարարեց, որ ինքը այլեւս պիտի չի ներկայանայ նիստերուն, իսկ Արթուր Վարդանեան յայտարարեց՝ «Դատարանը շոու է»:

Յաջորդ դատական նիստը տե-

ղի կ'ունենայ 20 Յունուարին, ժամը 14:30:

Ըստ մեղադրական եզրակացութեան՝ Արթուր Վարդանեան 2015-ի Ապրիլին ստեղծած ու ղեկավարած է ՀՀ քաղաքացիներէն կազմուած յանցաւոր համագործակցութիւն, կազմակերպուած խումբի կազմին մէջ ապօրինի կերպով ձեռք բերած է, պահած, փոխադրած եւ կրած մեծ քանակութեամբ զէնք, ռազմամթերք, պայթուցիկ նիւթեր, պայթուցիկ սարքեր՝ նպատակ ունենալով Հայաստանի Հանրապետութեան իշխանութիւնը իւրացնել:

Հայր Անտոն Տիգրան Թիւրինճեան 2015-ի Ապրիլին անձնապէս ծանօթացած է Սպանիայէն ժամանած Արթուր Վարդանեանի հետ, մասնակցած է վերջինիս կողմէն ստեղծուած ու ղեկավարած յանցաւոր համագործակցութեան՝ ֆինանսաւորելով զայն:

Պաշտպանութեան նախկին փոխնախարար Վահան Շիրիանեան, Գառնիկ Մարգարեան, Վլատիմիր Առաքելեան, Խաչիկ Աւետիսեան, Աւետիս Բարէեան, Վաղինակ Ստեփանեան, Արթուր Եղիազարեան, Վահագն Սալյանզարեան, Արման Հայրապետեան, Էդուարդ Նէրսիսեան, Յարութիւն Սարիբէկեան, Արա Պողոսեան, Տիգրան Պօլաճեան, Գէորգ Զնդոյեանը, Արկատի Մարտոյեան, Ասիա Մկրտչեան, Մարինէ Գաթանեան, Նելլի Մինասեան նոյնպէս միացած են Արթուր Վարդանեանին:

Բոլորին մեղադրանք առաջադրուած է Քրէական օրէնագրքի 223-րդ յօդուածի (Յանցաւոր համագործակցութիւն ստեղծելը կամ

National Geographic-ը Երեւանը Ընդգրկած է Աշխարհի Ամենահամեղ Սնունդը Առաջարկող Քաղաքներու Ցուցակին Մէջ



National Geographic ամսագիրը ներկայացուցած է աշխարհի վեց անսպասելի քաղաքները, ուր կարելի է համեղ սնուիլ: Ասիական երկիրներէն այդ ցանկին մէջ յայտնուած է Երեւանը:

National Geographic-ի լրագրողը Նէնսի Գափթոն Երեւան այցելած է շարք մը ճաշարաններ եւ սրճարաններ: Ան Հայաստանի մայրաքաղաքը ներկայացուցած է որպէս ծաղկող քաղաք՝ մատնանշելով բնական գեղեցկութիւնը, մշակոյթը եւ արագ զարգացող զբօսաշրջութիւնը:

«Նախաճաշը կարելի է սկսիլ Երեւանեան գեղեցիկ սրճարաններէն մէկուն մէջ: Կարող էք վերցնել

ձեր հետ Երեւանի ուղեցոյց կամ որոշ բուկլետներ՝ ճանապարհին ճիշդ կողմնորոշուելու համար», - գրած է National Geographic-ը, շարունակելով. «Օրը կարող էք եզրափակել Երեւանեան ռեստորաններէն մէկուն մէջ համեղ ընթրելով: Այստեղ կան հայկական աւանդական ուտեստներ մատուցող գեղեցիկ ռեստորաններ, ուր կարելի է շատ համեղ սնուիլ:

Երեւանէն բացի ցուցակին մէջ ընդգրկուած են նաեւ այլ քաղաքներ՝ Պոտտափեստ (Հունգարիա), Տիթրոյթ (ԱՄՆ), Սանտյագոն (Չիլի), Տաքար (Սենեկալ) եւ Վիլինկթոն (Նիւ Զիլանտ):

Թուրքիա Մտադիր է Հայաստանի Եւ Իրանի Հետ Սահմանին Պատ Կառուցել



“TÜRKİYE, ERMENİSTAN ve İRAN SINIRLARINA DUVAR ÖRECEK”

Թուրքիոյ իշխանութիւնները մտադիր են Սուրիոյ հետ սահմանին կրճատելու պատ կառուցել յետոյ նմանօրինակ պատ կառուցել նաեւ Հայաստանի ու Իրանի հետ սահմանին:

Ըստ շրջանառուող տեղեկութիւններուն՝ պատի կառուցումը պիտի իրականացնէ Թուրքիոյ կառավարութեան կից պետական բնակարանաշինութեան վարչութիւնը (TOKI): Ան, 5 մայիս, 2016-ին, ստորագրած էր արձանագրութիւն ազգային պաշտպանութեան նախարարութեան եւ ֆինանսներու նախարարութեան հետ երկրի վեց

նահանգներուն մէջ սահմանին 3 մեթր բարձրութեամբ եւ 2 մեթր լայնութեամբ կրճատելու պատ կառուցելու վերաբերեալ:

Երկրի արեւելեան սահմանամերձ քաղաքներուն մէջ, ինչպիսին են Կարսը, Իգտիլը ու Արտահանը, պատի կառուցումը մեկնաբանուած է «ահաբեկչական խմբաւորումներու եւ մաքսանենգութեան դէմ պայքարելու» անհրաժեշտութեամբ:

TOKI-ի նախագահ էրկիւն Թուրան յայտնած է, որ արդէն ապրիլին իրենք կ'աւարտեն Սուրիոյ հետ սահմանին պատի կառուցումը:

են կազմակերպուած խումբի կողմէն) եւ 35-300-րդ յօդուածի 1-ին մասով (Իշխանութիւնը իւրացնելու նախապատրաստութիւն): Նշենք, որ դատարան ուղարկուած է այն անձանց գործը, որոնց մեղադրանքը վերջերս խստացուած էր:

Human Right Watch.

Ոստիկանական Ուժի Անհամաչափ Կիրառում Հայաստանի Խաղաղ Ցուցարարներու Դէմ

Հայաստանի մէջ մարդու իրաւունքներու վիճակը 2016-ին մնացած է անհարթ ըստ Human Right Watch կազմակերպութեան տարեկան զեկոյցին: Իշխանութիւնները անհամաչափ ուժ կիրառած են խաղաղ ցուցարարներու դէմ, յարձակած լրագրողներու վրայ, անհիմն քրէական գործեր յարուցած բողոքի ցուցի առաջնորդներու եւ մասնակիցներու նկատմամբ: Կայուն խնդիր կը մնայ վատ վերաբերմունքը կալանավայրերուն մէջ, իսկ հետաքննութիւնները եղած են անարդիւնաւէտ:



Թիւններու եւ ֆիզիքական բռնութեան: Կառավարութիւնը քայլեր չէ ձեռնարկած ԼԳԲՏԻ անձանց դէմ ատելութեան խօսքի կամ խտրականութեան վերաբերող հարցերու կարգաւորման ուղղութեամբ:

2015-ի հոկտեմբերին Rainbow ֆորումէն յետոյ, որ կազմակերպուած էր հայկական ԼԳԲՏԻ բարեկամական խումբերու կողմէ փոքրամասնութիւններու իրաւունքներու պաշտպանութիւնը եւ խթանումը քննարկելու նպատակով, անյայտ անձինք թիրախաւորուած կերպով ահաբեկած ու սպառնացած էին որոշ մասնակիցներու:

Այլ մտահոգութիւններ են ընտանեկան բռնութիւնը, որ յաճախ անպատիժ կը մնայ, սեռական կողմնորոշմամբ եւ գենդերային ինքնութեամբ պայմանաւորուած բռնութիւնը եւ խտրականութիւնը, ինչպէս ան եւ ցաւազրկող դեղորայքի մատչելիութեան անհարկի սահմանափակումները՝ կեանքի տեւողութիւնը սահմանափակող հիւանդութիւններ ունեցող անձանց համար:

նութիւն սկսած են ոստիկանութեան յուլիս 29-ի գործողութիւններու առիթով: Աշխատանքին ազատած է Երեւանի ոստիկանապետը, կասեցուած են չորս սպաներու լիազօրութիւնները մինչեւ քննութեան աւարտը, 13 ծառայող ստացած է նկատողութիւն:

Իշխանութիւնները զրկած են ձերբակալուածներէն շատերուն իրենց տարրական իրաւունքներէն, այդ կարգին իրենց ընտրութեամբ անյապաղ փաստաբան հրաւիրելու եւ հարազատներուն իրենց կալանաւորման եւ գտնուելու վայրի մասին տեղեկացնելու հնարաւորութեանէն:

Յունուար 1-ին, ոստիկանութիւնը իբր ոստիկանի հանդէպ բռնութիւն գործադրելու համար ձերբակալած էր ընդդիմադիր Գէորգ Սաֆարեանին, «Հիմնադիր խորհրդարանի» անդամներու կողմէ կազմակերպուած հրապարակային միջոցառման ժամանակ տեղի ունեցած քաջքուքի ընթացքին: Սարաֆեան հերքած է, որ յարձակած է սպայի վրայ:

Յունիսին իշխանութիւնները ձերբակալած են «Հիմնադիր խորհրդարանի» առաջնորդ ժիւրայր Սեֆիլեանին եւ վեց այլ անդամներու՝ զինուած յեղաշրջում նախապատրաստելու մեղադրանքով: Սեֆիլեան հերքած է այդ մեղադրանքները՝ դրանք պայմանաւորելով քաղաքական դրդապատճառներով:

Յունիսին ՊՊՄ գլխաւոր զինուած զորամաս մէջ ներգրաւուած զինուորներն ի սկզբանէ պահանջած էին Սեֆիլեանի ազատ արձակումը եւ նախադասի հրաժարականը՝ պատանդներուն ազատ արձակելու դիմաց:

րուն, որ կանանց հանդէպ բռնութիւնը տարածուած է, եւ կանանց իրաւունքներու պաշտպանութեան խումբերու ու ընդդիմադիրներու հետեւողական պայքարի, Հայաստանը չունի ընտանեկան բռնութիւնը քրէականացնող օրէնք եւ չի վաւերացուցած Եւրոպայի խորհուրդի համագումարին կանանց նկատմամբ բռնութեան եւ ընտանեկան բռնութեան կանխարգելման եւ անոր դէմ պայքարի մասին: Ընդդէմ կանանց նկատմամբ բռնութեան համագումարը հրապարակած է զեկոյց՝ փաստաթղթազրկելով զուգընկերոջ եւ ընտանիքի անդամներու կողմէն կանանց սպանութեան 30 դէպք 2010-2015-ին ինկած ժամանակահատուածին մէջ: Զեկոյցին մէջ նշուած է, որ ընտանեկան բռնութիւններու մասին տեղեկատուութիւնը չ'արտացոլէր ամբողջական պատկերը, իսկ բռնութիւնը հիմնականին կիրառուած է՝ մնալով անպատիժ: Միութեան անդամները ընտանեկան բռնութեան մասին ամէն տարի կը ստանան աւելի քան 2000 հեռախօսազանք:

Հիմնական միջազգային դերակատարներ

Եւրոպայի խորհուրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵՆԽՎ) դիտորդական առաքելութիւնը յատարարած է, որ 2015-ի դեկտեմբերին՝ նախագահականէն խորհրդարանական կառավարման համակարգի փոխակերպման հանրաքուէի կայացումը «պայմանաւորուած է եղել քաղաքական շահերով, այլ ոչ Հայաստանի ժողովրդի կարիքներով»: ԵՆԽՎ-ն քննադատած է ընտրացուցակներու անճշտութիւնը, ընտրակաշառքի մասին յայտարարութիւնները, վարչական աղբիւրներու չարաշահումները, անհաւասար մետրա դաշտը եւ շարժական քուէարկութեան բացակայութեան պարագային՝ հաշմանդամութիւն ունեցող անձանց քուէարկելու հնարաւորութեան փաստացի բացառումը:

Սեպտեմբերին ՄԱԿ-ի Մարդու իրաւունքներու հարցերով գերագոյն յանձնակատար Զիատ Ռատտ ալ-Հուսէին քննադատած է իշխանութիւններուն իր աշխատակազմին լիարժէք հասանելիութիւն չ'ապահովելու եւ կառավարութեան ու քաղաքացիական հասարակութեան հետ լիարժէք համագործակցութիւնը խոչընդոտելու համար:

Մարտին ՄԱԿ-ի Մարդու իրաւունքներու խորհուրդին ուղղուած իր զեկոյցին, Մանկավաճառութեան, երեխաներու մարմնավաճառութեան հարցերով ՄԱԿ-ի Յատուկ զեկոյցող Մօտ տի Պէօր-Պուքիքիոն, արձանագրած է Հայաստանի առաջընթացը մարդկանց թրափիկինգի դէմ պայքարին, երեխաներու թիւի նուազումը խնամքի կեդրոններուն մէջ, եւ միջպետական որդեգրումներու սահմանափակումները:

Յաւանորոշիչ խնամք

Իշխանութիւնները շարունակած են քննարկել դեղատոմսերու դուրսգրման եւ գնումներու բարդ ու ժամանակատար ընթացակարգերու բարեփոխման հարցը, որ անհարկի խոչընդոտներ կը ստեղծէ առաջին անհրաժեշտութեան օփիոիդային դեղորայքի մատչելիութեան համար:

Սեռական կողմնորոշում եւ գենդերային ինքնութիւն

Ընդդիմադիրները հաղորդած են, որ միասեռականները (ԼԳԲՏԻ) մարդիկ շարունակած են ենթարկուել խտրականութեան, ոտնձգու-

Ոստիկանական ուժի անհամաչափ կիրառում

Յունիսին, Հայաստանի իշխանութիւնները անհամաչափ ուժ կիրառած են կառավարութեան ընդդիմացող արմատական խումբին աջակցութիւն ցուցաբերող խաղաղ ցուցարարներուն դէմ, յարձակումներ գործած ցուցերը լուսաբանող լրագրողներուն վրայ: Իշխանութիւնները կամայականօրէն կալանաւորած են բողոքի ցուցի տասնեակ առաջնորդներու եւ մասնակիցներու՝ անոնց առաջադրելով անհիմն քրէական մեղադրանքներ, իսկ անոնցմէ ոմանց զրկելով կալանաւորի հիմնական իրաւունքներէն:

Յունիս 29-ին ոստիկանութիւնը կիրառած է խլացուցիչ նռնակներ ոստիկանութեան գրաւուած գոտիներ հարեւանութեամբ հաւաքուած խաղաղ բազմութեան նկատմամբ՝ ցուցարարներուն պատճառելով առաջին եւ երկրորդ աստիճանի այրուածքներ եւ բեկորային վնասուածքներ: Ոստիկանութիւնը չէ փորձած կիրառել բազմութիւն վերահսկման՝ առաւել նուազ վտանգաւորութեան միջոցներ եւ որեւէ ողջամիտ ջանք չէ գործադրած բազմութեան ցրուելու կողմնակալ կամ ուժ կիրառելու իրենց ծրագրերու մասին նախազգուշացնելու համար: Իշխանութիւնները հետաքն-

Կանանց իրաւունքներ
Չնայած այն վկայութիւններ-

Bedros S. Maronian
818/500-9585

Siamanto B. Maronian
818/269-0909

SERVING THE COMMUNITY SINCE 1975
More locations and more ways to service your insurance and financial needs

<p>6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048</p> <ul style="list-style-type: none"> • Life Insurance • Health Insurance • Group & Individual • Long Term Care • Disability 	<p>805 East Broadway Glendale, CA 91205</p> <ul style="list-style-type: none"> • Estate Planning • Will & Living Trust • Full Annual Review • Mortgage Protection • College Planning 	<p>300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101</p> <ul style="list-style-type: none"> • Workman's Compensation • Employee Benefits • Annuity • IRA • 401K & 403B
--	---	---

A.B.A. INSURANCE SERVICES

Insurance coverage can help you financially!
Ապահովագրութիւնը Անհրաժեշտ է

Coverage & Protection should be on the top of your priority list.

Seniors 65 & Up Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits

ԱՐԱՐԵԿԵԱՎ, ԹԵ՞ ԱՐԱՐԵԿԻՉ ԹՈՒՐՔԻԱՆ



ՄԵԹՐ ՊԱՐԳԵՒ ԴԱԻԹԵԱՆ

Ամիսներէ ի վեր ասաբեկչու-թիւնը կը հարուածէ Թուրքիան: Էրտողանի իշխանութիւնը կը ներկայանայ աշխարհին որպէս ասաբեկեալ: Զանազան դիմակներով եւ գինակցութիւններով գործող էրտողանի Թուրքիան, նստած մերթ Ատլանտեան Ռիտի կողքին եւ մերթ ալ Ռուսիոյ, կը փորձէ խաբել աշխարհը եւ ծածկել իր իսկական երեսը՝ քօղ քաշելով իր ասաբեկիչի դէմքին, եւ կերպարանափոխուած՝ կ'ուզէ երեւնալ ասաբեկեալ՝ աշխարհի աչքին: Սիւննի Արաբիստանի դեկը անարժանաբար իրեն տրուած Թուրքիան գոհն է իր սեփական նենգամտութեան ու շարամտութեան: Անոր ներկայ կրօնապաշտ քաղաքականութիւնը եղաւ պատճառ, որ ան դառնայ անցք կամ «թրանզիթ», օգնական ու պատասպարան բոլոր սիւննի ասաբեկիչներուն, որոնք իր սահմաններէն անցնելով դարձան փորձան մարդկութեան: Առաւել, անոր միջնադարեան ծիծաղելի քաղաքականութիւն քարոզող կրօնական Հարցերու Տեսչութիւնը (Directorate of Religious Affairs), կամ Թրքերէնով՝ «Տիանէթ» կոչուող հաստատութիւնը, որ սերտ գործակից եւ համակիր կը նկատուի էրտողանին, վերջերս Միւֆթի Մեհմետ Կէօրմեզի յորդորը փոխանցելով Թուրքիոյ մէջ գործող աւելի քան ութսուն հազար մզկիթներուն, անոնց կը թելադրէր իստորէն քննադատել Նոր Տարուան տօնակատարութիւն կատարելը երկրին մէջ, պատճառաբանելով, թէ այդ տօնը խոտոր կը թուի եւ տեղ չունի թրքական բարքերուն ու սովորութիւններուն մէջ:

Իսթամպուլի Նոր Տարուան գիշերուան ասաբեկչութենէն քանի մը օր առաջ, նկար մը լոյս տեսած էր թրքական «Հիւր ըիթթ» թերթին մէջ, որ անմիջապէս ողողեց Թուրքիոյ եւ աշխարհի լրատուամիջոցները, որուն մէջ կաղանդ պապայի կերպարով անձ մը Թուրք կերպարով երեւցող երեք մարդոց առջեւ ծուած ու գլխուն գէնք դրուած վիճակով ցոյց կը տրուէր: Կրօնապաշտութեամբ տոգոտ ու կարճամիտ մարդոց կողմէ շրջանառութեան դրուած այդ նկարը (գուցէ մեծ մասամբ էրտողանի հետեւորդներ կամ համակիրներ) կը հրատարակուէր որպէս գործադրութիւն այն յորդորին, որ տրուած էր Թուրքիոյ Միւֆթի Մեհմետ Կէօրմեզի եւ «Տիանէթ»-ի կողմէ, Նոր Տարուան վաղորդային:

Էրտողանի իշխանութիւնը նման նկար արտադրողներն ու տարածողները երկրին մէջ աստուութիւն սերմանող եւ ապահովու-

թիւն խանգարող չնկատեց ու զանոնք հալածանքի չենթարկեց: Անդին, սակայն, նոյն այդ իշխանութիւնը աջ ու ձախ ձեռքակալութիւններ կը կատարէր՝ պատժելու համար անոնց, որոնք, ըստ էրտողանեան տրամաբանութեան, «աստուութիւն կը սերմանէին եւ

Շար.ը էջ 19

ԹՈՒՐՔ ԹԱՏԵՐԱԳԵՏ.- «ԱՌԱՆՑ ԿՈՏՈՐԱԾԻ ԱՊՐԱԾ ԳՈՆԷ ՄԵՎ ՏԱՐԻ ՈՒՆԻՆՔ»

Թուրք թատերագէտ եւ սիւնակազիր Հիլալ Նեսինը Թուրքիոյ խորհրդարանի հայ պատգամաւոր կարօ Փայլանի՝ ցեղասպանութիւն բառի գործածման համար խորհրդարանի յառաջիկայ 3 նիստին մասնակցելու իրաւունքէ զրկուելէ ետք, Twitter-ի իր էջին մէջ գրառումով հեզնած է Թուրքիոյ մէջ ցեղասպանութիւնը հերքողները: Հիլալ Նեսինի գրառումը՝ Tert.am-ը կը ներկայացնէ ստորեւ. «Թուրքիոյ մէջ Հայոց ցեղասպանութիւն չկայ, փոխարէնը կայ «հայու դիակի պէս ծանր» արտայայտութիւնը: «Թուրքիոյ մէջ Հայոց ցեղասպանութիւն չկայ, փոխարէնը երկրի ամբողջ տարածքին մէջ կան հայերու կառուցած դպրոցները, եկեղեցիները, ալրաղացները... «Թուրքիոյ մէջ Հայոց ցեղասպանութիւն չկայ, փոխարէնը մէկ դար շարունակ հայերու թաղած ոսկիները փնտռող միլիոնաւոր մարդիկ կան: «Հայ ըլլալու համար սպան-



նուած Հրանդ Տինքը կայ, անմեղ տեղը բանտ նետուած Սեւան Նշանեանը (գրող, մտաւորական) կայ, բայց հայկական կոտորած չկայ: «Այս գրութիւնը գրելու համար քիչ անց ինձի անձնական նամակով «վայ դուն հայու սերմ, հայու ապօրինածին» գրողներ պիտի ըլլան, սակայն հայկական կոտորած չկայ: «Սորվեցէ՛ք ապրիլ առանց կեղծիքի: «Հարցուցէ՛ք դուք ձեզի. «Առանց կոտորածի ապրած գոնէ մէկ տարի ունի՞նք»:



ՊՈԼՍԱՀԱՅ ՄԻՈՒԹԻՒՆԸ
Կը հրաւիրէ ձեզ

ՅՈՒՇ ԵՐԵՎՈՅԻ ՄԸ
ՀՐԱՆԴ ՏԻՆՔԻ

ՆԱՀԱՏԱԿՈՒԹԵԱՆ 10ԴՐ ՏԱՐԵԼԻՑԻՆ ԱՌԹԻԻ
Շնորհում՝ Հրանդ Տինքի
Հոգիի Ազատութեան եւ Արդարութեան Տարեկան Շքանշանը

ՊՈԼՍԱՀԱՅ ԼՐԱԳՐՈՂ ԵՎ ՆԱԽԿԻՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԽՄԲԱԳԻՐ՝
ՊՈԼՍՈՅ «ԱԿՕՍ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ
ԱՐԻՍ ՆԱԼԸՇԻ

Պիտի զեկուցեն

ԱՍԸ ՊԱԼԻ (Իրաւաբանութեան Փրօֆ. UCLAի մէջ)

ԻԻՄԻԹ ԳՈՒՐԹ (Այցելու Փրօֆ. Հարվըրտ Համալսարանի մէջ)

Բացման խօսք՝
ՖՐԵՆՔ ՎՈՒԱՍ ԾԵՐՈՒՆԵԱՆ
Rolling Hills Estate քաղաքի քաղաքապետ եւ Փրօֆ. USCի մէջ

Ցոյացումներ՝
Իրաւաբան ԿԱՐՕ ՂԱԶԱՐԵԱՆ
(Համանախագահ՝ Հայկական Հսկողութեան Իրաւունքներու Հայ Իրաւաբանական Կաճառի)

Հանդիսավար՝
Իրաւաբան ԷՏՎԻՆ ՄԻՆԱՍԵԱՆ
(Ատենապետ՝ Պոլսահայ Միութեան Հոգաբարձութեան)

Գեղարուեստական Յայտագիր

Տոքթ. Այշէ Թաշքընար (Դաշնակ) եւ **Ալպըրդ Կարդանեան** (Տուտուկ)

Կիրակի, Յունուար 22, 2017, երեկոյեան ժամը 6:00ին
Պոլսահայ Միութեան «Գրիգոր Եւ Աւետ Քիրքչիօղլու» սրահին մէջ 19726 Sherman Way, Winnetka, CA 91306
Տեղեկութեանց համար հեռաձայնել Տոքթ. Յովհաննէս Գուլակ Աւետիքեանին (818) 800-1976 (cell)

Մուտքը ազատ **Հիւրասիրութիւն**

Առաջնային Հովանաւոր: Ճորճ «Իկնէշըս» Հիմնադրամ
Հոգաբարձուներ: Իրաւաբաններ՝ Ուոլթըր Քարապեան, Մայքըլ Ամերեան եւ Ճորճ Ֆիլիպս

ԻՆՉ ԿԸ ՍՊԱՍՈՒԻ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՅԱՄԱՐ



ՍԱԳՕ ԱՐԵԱՆ

Անցեալ Կիրակի (8 Յունուար) յետմիջօրէին, գրասաշրջային պտույտի ելած տասնեակ իսրայէլացի զինուորներ թիրախ կը դառնային պաղեստինցի նախկին բանտարկեալի մը գրոհին: Պաղեստինցին, որ կը կոչուէր Ֆատի Քանպար, կու գար ժապալ Ալ Մաքպէր աւանէն: Ան բեռնատար կառքով «կը քշէր» զինուորներուն ուղղութեամբ ու ապա կը սպաննուէր դէպքին վայրը գտնուող անցորդներէն մէկուն բացած կրակով: Ամբողջ արաբական եւ իսրայէլեան լրահոսը լեցուցած տրամաթիք դէպքը Միջին-Արեւելեան մաշտապով կը դառնար քաղաքական անցուդարձերու «թոփ նյութ»: Կողմի մը համար՝ (պաղեստինեան) հերոսական եւ միւս կողմին համար (իսրայէլեան) անարեւելեան համարուած իրադարձութիւնը ոչ միայն իր վրայ կը սեւեռուէր Միջին Արեւելքի զարգացումներուն հետեւող դէտերուն ուշադրութիւնը, այլ աւելին կու գար փաստելու, որ պաղեստին-իսրայէլեան հակամարտութիւնը կրնայ դարձեալ բորբոքիլ ու սուր մագլցում գրանցելով աւելի եւս տագնապի տանիլ, առանց անոր ալ անհանգիստ Միջին Արեւելքի ընդհանուր տեսարանը:

Ս. Տերունի իր ժամանակին վկան էր. ապրելով ու գործելով Կիլիկիա, Սուրիա եւ Լիբանան, ճաշակելով գաղութատիրութեան նենգամիտ դաւերը, ակնատեսը ըլլալով հայութեան տարագրութեան, գաղթականութեան թշուառութեան, հայրենագրկումի դաժանութեան, տարտամ հորիզոնի դիմաց՝ Ս. Հայաստանի գոյառումին եւ վերածննդեան, ինքզինք նետեց պայքարի թէ՛ խրամատին մէջ՝ գրիչով, բեմով, դաստիարակչական աշխատանքով յոյս ու լոյս սփռելու իր շրջապատին, ընկերութեան եւ իր պատկանած գաղափարական շարժումին: Տակաւին վաղ երիտասարդ, իր գաղափարական եւ հայրենասիրական սկզբունքներուն հարազատ արտայայտիչը համարելով Ս.Գ. Հնչակեան Կուսակցութիւնը, անդամակցելով անոր, իւրացնելով անոր դասնանքն ու պայքարի ոգին, գայն սեպելով արդարասիրութեան եւ հայրենապաշտութեան դարձումը, մնաց աներեր ու օրինակելի հաւատաւորը այդ ուղղութեան: Ժամանակաշրջան մըն էր, երբ համարեալ զխատուած էր կուսակցութիւնը Մեծ Եղեռնէն ետք, հայութեան խլեակները հազիւ կրնային գոյատեւել թիթեղաշէն հիւղակներու մէջ, անգրագիտութիւնն ու հիասթափութիւնը խորտակած էին արմատախիլ հայրենակիցները:

Եւ ահա այս պայմաններուն մէջ, Ս. Տերունի հոյլ մը գաղափարակիցներու հետ կ'անցնէին վերագարթնումի, կազմակերպման եւ վերականգնումի աշխատանքին: Արդարեւ, այդ սերունդն էր որ անապատի ու նախճիրի մահազարհուր ուրուականէն յառնած՝ եղաւ շարունակական օղակը հայութեան հրաշափառ յարութեան:

Երբ Ֆրանսացիք 1920-ին ամենայն սառնասրտութեամբ վաճառեցին Կիլիկիան՝ հայու արեան գինով եւ դրժեցին իրենց խոստումները շողջողուն, Ս. Տերունին խորապէս ըմբռնեց գաղութատիրութեան հոլիւնը եւ արաբ ժողովուրդի ազատագրական պայքարի կողքին կանգնելով՝ եղաւ անոր զինակիցը: Ճնշող հակառակորդին անբաղձալի տարրն էր ան, որուն համար հալածուեցաւ ու աքսորուեցաւ Արուստ կղզի: Այդ մեկուսարանէն իսկ շարունակեց



բողոքել անարդարութեան դէմ: Ընկերավարական հնչակեանի վայել արժանապատուութեամբ եւ խիզախութեամբ հիւրընկալ ժողովուրդին համակրանքը ապահովեց ի նպաստ հայութեան:

Օրուան հացի կարօտ արմատախիլուած հայութեան համար ի՞նչ

կար անսակարկելի ու նուիրական արժէք՝ եթէ ոչ հայրենիքը: Իր քարոզչութեան, հաւատամքին եւ գուպարին հոլիւնը կազմեց հայրենասիրութիւնը եւ հրապարակեց իր նշանաւոր կարգախօսը՝ «ՅՈՒՆ Արարատի փեշերուն պիտի զարնենք մեր վրանները»: Ինչ մարգարէական դիրքորոշում էր սա՛՛ երբ մարդիկ անտեղիօրէն ոխ ու քէն կը պահէին հայրենիքի նկատմամբ: Ի՞նչ փոյթ վարչակարգին անունն ու դրօշակին գոյնը՝ երբ խնդրոյ առարկան Հայաստանն է: Միթէ՞ բոլոր ժամանակներու ուղղուած պատգամ մը չէ այս՝ որմէ կը խորշին նոյնիսկ Հայաստանը չտեսած ապերախտներ, քաղքենիներ, թեթեռամիտ նորեւտներ: Ոչ միայն այդ դժիւր օրերուն, այլեւ ընդմիշտ հայրենիքը կը մնայ սփոփարար կուռան, գոյութեան գրաւական եւ մշտավառ փարոս:

Սարգիս Տերունիին ստացած ազգային-հայրենասիրական եւ ընկերային-գաղափարական դաստիարակութեան ստնտուն ան-

երկբայելիօրէն եղաւ Ս.Գ. Հնչակեան Կուսակցութիւնը: Ան իր հերթին ծառայեց անոր կարմիր դրօշին՝ մինչեւ նահատակութիւն:

Փաղափարական գոհասեղանէն չվախնալով, ան այդ ոգին փոխանցեց հնչակեան երիտասարդութեան: Յետմահու եւ ցայսօր ան կը մնայ երիտասարդութեան կողքին՝ գէթ գաղափարապէս եւ բարոյապէս:

Ընդգծելի է, որ անոր հանրային գործունէութիւնը ընդգրկեց տարբեր ոլորտներ.՝ մամուլ, հոետորութիւն եւ ուսուցչութիւն. այսինքն՝ հնարաւոր բոլոր միջոցներով ծառայեց իր պատկանած շրջապատին: Եւ տակաւին ինչքան տալիք ունէր հայութեան, որ մնաց կիսատ դաւադիր գնդակներու հետեւանքով:

Ինչո՞ւ ինկաւ արիւնլուայ, անժամանակ եւ իր առաքելութեան կէս ճանապարհին. որովհետեւ՝ Ս. Հայաստանի, արդարութեան եւ գաղափարի զինուորն էր ան եւ

Շար.ը էջ 19

ARARAT-ESKIJIAN MUSEUM
NATIONAL ASSOCIATION FOR ARMENIAN STUDIES AND RESEARCH (NAASR)
THE ARMENIAN STUDIES PROGRAM
AT CALIFORNIA STATE UNIVERSITY, NORTHRIDGE

Present a Conference on

Hadjin: Remembering a Historic Armenian Community in Cilicia
Dedicated to the memory of Lawrence and Dorothy Avakian

Moderators: **Dr. Vahram Shemmassian** and **Dr. Hasmig Baran**

Morning Session: 10:00 a.m. – 12:30 p.m.
Dr. Antranig Dakessian
 “Hadjin and Its Legacy”

Kevin Blowers
 “The United Orphanage and Mission Society: Its People and History”

Paul Hoover
 “The Life and Story of Joshua Fidler: The First Superintendent of Hadjin Orphanage”

Hratch Kozybeyokian
 “Knotted Memories and Patches of Hope”

Afternoon Session: 1:30 p.m. – 4:00 p.m.
Araxy and Lory Tatoulian
 Theatrical performance on the life of a Hadjintsi heroine, Aguline Tatoulian

Dr. Rouben Adalian
 “Learning in Hadjin: Students and Teachers”

Dr. George B. Kooshian, Jr.
 “The Web of Hope: The Memoirs of George B. Kooshian”

Dr. Kay Mouradian
 Documentary film presentation: My Mother’s Voice

Closing Session: 4:00 p.m. – 5:00 p.m.
Dr. Vatche Mankerian and Dr. Garineh Avakian
 A tribute to the lost art of music makers of Hadjin and Cilician Armenia

”WATCH THIS EVENT LIVE AT [HTTPS://TOSTREAMLIVE.COM/HAJIN](https://tostreamlive.com/hajin)”

Saturday, February 11, 2017 - 10:00 a.m. to 5:00 p.m.
 George Deukmejian Community Center
 15105 Mission Hills Road – Mission Hills, CA 91345

For more information, please contact (747) 500-7585 or ararat-eskijian-museum@netzero.net.

The conference is open to the public with free admission; lunch will be available for purchase

ՈՍԿԱՆ ՎԱՐՂԱՊԵՏԻՆ ՏԵՍԻԼԸ

ԴՈՎՏ. ԳՐԱՅՐ ԵՒՊԵՏԱՆ

«Խօսքը կը թռչի, բայց գիրը կը մնայ»:

Հատին փրկիտփայտութիւնը կը հաւատար (եւ արժանաւոր ձեւով) թէ գիրը՝ իր տպագիր ձեւին մէջ է որ կը մնայ: Եւ մնալը սոսկ գոյութեան համար չէ: Այլ ֆրիգիքականէն անդին՝ պատգամը պահելու գիտակցութեանը մէջ: Պատգամը՝ որ կը կերտէ ֆրիգիքական գոյութիւնը՝ բայց նաեւ իմացական ու հոգեմտաւոր եւ անհատին ու հաւաքականութեանը մշակութային արժէքները փոխանցելու կարեւոր հարամայականովը:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ հայրապետը՝ Անթիլիասի Հայ գիրքի երեսուն եւ եօթներորդ ցուցահանդէսը 30 Հոկտեմբեր 2016ին, նուիրեց հայերէն Աստուածաշունչի տպագրութեան երեք հարիւր եւ յիսուն ամեակին: Որովհետեւ եւ ինչպէս վեհափառ հայրապետը կը վկայէ՝ Աստուածաշունչը Աստուծոյ յայտնութիւնն է՝ իւրապատու, սուրբ եւ ամբողջական արժէքը քրիստոնէական հաւատքին: Եւ այս իրականութեան մեկնելով՝ վեհափառ հայրապետը առաջնահերթ կը նկատէ թէ Աստուածաշունչը պէտք է ներմուծել հաւաքականութեանը կեանքին մէջ՝ նպատակ ունենալով նոյն այս կեանքերուն տալ յառաջխաղացք, փոխելով գանձը (կեանքերը) արժէքի հասկացողութեանը մէջ եւ անոր համար:

Եւ այս «ներմուծելը» իրականացաւ՝ ու տակաւին խօսքէն անցաւ գիրին՝ իմ մա Աստուածաշունչի տպագրութեամբը՝ ուր գիրը յաւերժացաւ, եւ որ Ոսկան վարդապետի տեսիլքին արքային էր:

Գաղթականի գաւակ՝ ծնողքը Շահ-Աբասի ժամանակ Երեւանէն տեղահանուած էր ու Սպահան, Նոր Զուղայ հաստատուած: Ոսկան ծնած էր 1614 թուականին՝ հայրենի հողէն հեռու՝ Նոր Զուղայի մէջ: Եւ ան կրցաւ ունենալ երազը եւ գայն իրականացնելու համար տեսիլքը, թէ իր հողէն հեռու ապրող հայր պէտք է շարունակէ ապրիլ: Եւ այդ ապրելուն մէջ պէտք էր պատգամը՝ ու անհրաժեշտութիւնը նոյն այդ պատգամը ներմուծելու հայուն հաւաքական կեանքերուն մէջ:

Եթէ Ոսկան վարդապետի կեանքը ստացաւ տարբեր հեւք՝ որովհետեւ ան կրցաւ տեսնել թէ հայ ժողովուրդին ապրելու հրամայականին համար պէտք էր հայերէն Աստուածաշունչին տպագրութիւնը: Ան առանց յուսահատելու անդադար թափառեցաւ բայց նաեւ տառապեցաւ եւ իր երազին տուաւ տեսիլք՝ բայց նոյն այդ տեսիլքը իրականացուց 1666 էն մինչեւ 1668 տարիներուն երբ հայը ունեցաւ տպագիր առաջին հայերէն Աստուածաշունչը՝ տպուած Ամսթերտամի մէջ՝ իր իսկ ձեռքով:

Եւ վեհափառ հայրապետը: «Աստուածաշունչը տպագրելով՝ Ոսկան վարդապետ սոսկ տպագրական մարզին մէջ կարեւոր իրագործում մը չէր կատարեր, անոր հիմնական նպատակը մեր ժողովուրդը հրաւիրել էր Աստուածաշունչը կարդալն ու ճանչնալն անդին՝ գայն ապրելու: Հոս կը կայանայ խորունկ իմաստը Աստուածաշունչի տպագրութեանը:

Եւ իրաւացի է պատմաբան Լէոյի զգանչացումի վկայութիւնը: «Ոսկան վարդապետ օտար հողի վրայ գործելով հանդերձ եւ նկատի ունենալով



այդ օրերու տպագրութեան գործի հանգամանքները, կարելի չէ չզարմանալ այդ տպագրութեան վրայ»:

Եթէ Մովսէս Մարգարէն Սինայի բարձրունքին վրայ իր ժողովուրդին սեփականութիւնը դարձուց երկնային օրէնքին տախտակները եւ որ գարի տուաւ Եբրայական գրականութիւնը՝ Մերոպ Մաշտոցը Աստուածաշունչը հայացուց: Իսկ Ոսկան վարդապետ գայն ժողովուրդին սեփականութիւնը դարձուց եւ այդպիսով հայ գիրի նկատմամբ նաեւ սէր ներմուծեց հայ ժողովուրդի կեանքին մէջ:

Բայց կայ տակաւին Ոսկան վարդապետի երազին եւ տեսիլքին խորքային տուեալները: Թէ ինչու՞ եւ ինչ՞ բանի համար էր Ոսկան վարդապետի մղումը Աստուածաշունչը ժողովուրդին սեփականութիւնը դարձնելու իր հեւքին մէջ:

Արամ Վեհափառը ունի պատասխանը: «Հոգեւոր Արթնութիւն»:

Եւ հոգեւոր արթնութիւնը պէտք է սահմանափակել այսպէս ըսած իր կրօնա-քրիստոնէական տեսադաշտէն միայն: Որովհետեւ Աստուածաշունչի դաստիարակութիւնը համապարփակ է: Համա-

պարփակ, որովհետեւ Աստուածաշունչը եւ անոր դաստիարակութիւնը եթէ մէկ կողմէ կը կամրջէ անհատը իր ապրած կառոյց (նե-

կանացնելու մէջ կար հաւատքը՝ Ոսկան վարդապետին՝ եւ երեք հարիւր եւ յիսուն տարիներ առաջ, թէ հայ ժողովուրդը պէտք է շա-



րուն) հետ եւ անոր նկատմամբ տածած հեռաքրքրութեանը, բայց նաեւ կը փորձէ տալ հաւասարակչութիւն մը անհատին ապրած ու ապրելիք իրադարձութիւն-իրականութիւններուն ու ձգտելի եւ հասանելի արժէքներուն միջեւ եւ անոնց հետ, ու զանոնք կիրարկելու համար ստեղծուած եւ ստեղծելի միջոցառումներուն: Եւ այս համապարփակ դաստիարակութեան միջոցառ է որ անհատը կը շինէ եւ կը վերաշինէ իր հաւատամքները եւ անոնց մեկնաբանութիւնները՝ ուր հաւաքականութեան կեանքերուն համար կուտայ հասարակական նշանակութիւններ եւ զանոնք կիրարկելու համար համակերպման միջոցառումներ:

Եւ այս համակերպման միջոցառումներով եւ հասարակական նշանակութիւններով է որ մարդիկ եւ հաւաքականութիւններ կը շարունակեն ապրիլ՝ իրենց կեանքերուն տալով նոր եւ նորոգուող լիցք: Եւ այս նոր լիցքով է որ հաւաքականութիւններ կ'արձանագրեն յառաջխաղացք:

Եւ դարձեալ Լէոն է: «Ոսկանը գոհ էր: Զոհ իր զարմանալի եռանդին»: Բայց պէտք է մտահան ընել թէ այս գոհի ինքնագիտակցութիւնը մղեց գիրք իր երազը եւ տեսիլքը իրականացնել: Եւ իրա-

րունակէ ապրիլ միշտ նոր ու նորոգուող լիցքով մը, հասնելու համար մինչեւ այսօրը ու տակաւին աւելին...: Եւ նոր լիցքը կարեւոր է որպէսզի հայուն կեանքը չի լճանայ ժամանակի սլացքին հետ՝ այլ յառաջխաղացք արձանագրէ:

Ոսկան վարդապետին տեսիլքը: Հայուն համար է: Որպէսզի հայը իր կեանքը ապրի եւ շարունակէ ապրիլ նոր լիցքի այս տեսլականովը եւ անոր համար:


Օգտագործուած աղբիւրներ: Aram I, Taking the Church to the People (Beirut, Armenian Catholicosate of Cilicia, 2011),

Paul Kybird, "Using the Bible in Adult Christian Education" (JATE 3, no. 1 2006).

Joseph Crockett, Engaging Scripture in Everyday Situations: An Interactive Perspective that Examines Psychological and Social Processes of Individuals as They Engage Scripture Texts (London, Equinox Publishing, 2005)

Լէօ «Հայկական Տպագրութիւն», Թիֆլիս, 1904

Ներսէս Արք. Պողոպալեան, «Ոսկան վարդապետ Երեւանցի», էջմիածին Ամսագիր, էջմիածին, 1966.



MARTIAL ARTS - ORGANIZED by

GAIDZ YOUTH ORGANIZATION

MASTER SEVAK HAKOBYAN - 4th DAN

INTERNATIONAL MASTER OF MARTIAL ARTS
WORLD RECOGNIZED MEMBER OF ADAPTIVE SPORTS

➤ MARTIAL ARTS

➤ SELF-DEFENSE

➤ SEPARATE GROUPS: MEN

➤ WOMEN

➤ CHILDREN



➤ PEOPLE WITH DISABILITIES

❖ FREE for PEOPLE With DISABILITIES - GREAT RATES for FAMILIES & STUDENTS

❖ OFFICIAL OPENING & DEMONSTRATION FRIDAY, JANUARY 20, 2017, AT 5:30 PM

ADDRESS: 1060 NORTH ALLEN AVENUE, PASADENA, CA 91104


For registration and info contact Gaidz Youth Organization: 626-926-7224; email: info@gaidz.org

Instagram @Gaidzyo;
f Gaidz Youth Organization;
Twitter @GaidzYouth

ԱՆԻ Կեդրոնը Պիտի Վերահրատարակել Ստեփան Սապահ-Գիւլեանի «Պատասխանատուները» Հատորը

Հայկական ուսումնասիրութիւններու «ԱՆԻ» կեդրոնը վերահրատարակութեան պատրաստած է Հնչակեան նշանաւոր գործիչներէն եւ կուսակցութեան տեսաբաններէն Ստեփանոս Սապահ-Գիւլեանի «Պատասխանատուները» հատորը:



Այն կարեւոր աղբիւր է 19-րդ դարու վերջը, 20-րդ դարու սկզբը հայ քաղաքական միտքի պատմութեան, այդ թուին՝ մէկ կողմէ ՄԴՀԿ եւ ՀՅԴ կուսակցութիւններու, միւս կողմէ՝ Երիտթուրքերու միջեւ վաղ շփումներու եւ գործակցութեան մասին:

Սապահ-Գիւլեանը իրադարձութիւններու մասին կը պատմէ որպէս անոնց մասնակից: Ըլլալով Հնչակեան կուսակցութեան առաջնորդներէն, ան Եւրոպայի մէջ հանդիպումներ ունեցած է Երիտթուրքերու տարբեր ներկայացուցիչներու հետ:

Սապահ-Գիւլեանը «Պատասխանատուները» գրած է 1915-1916-ին՝ Գահիրէի մէջ: 1974-ին գիրքը վերահրատարակուած է Պէյրութի մէջ:

«Պատասխանատուները»-ը գիրքի ինչպէս նախկին երկու, այնպէս ալ երրորդ հրատարակութիւնը պիտի ըլլայ արեւելահայերէն եւ մեսրոպեան դասական

ուղղադրութեամբ: Սապահ-Գիւլեանը ծնած է Նախիջեանի ճահուկ, այժմ՝ Ջահրի գիւղին մէջ 1861-ին: Սորված է Թիֆլիսի Ներսիսեան դպրոցէն ներս:

33 տարեկանին 1894-ին, միացած է Հնչակեան կուսակցութեան, դարձած անոր առաջնորդը: Հիմնադրած եւ խմբագրած է «Երիտասարդ Հայաստան», «Հնչակ», «Վերածնունդ», «Նոր Աշխարհ» պարբերականները: Հեղինակ է շարք մը արժէքաւոր հատորներու:

Սապահ-Գիւլեանը մահացած է 1928թ. Ապրիլին, Նիւ Ճըրզիի մէջ:

«Հայաստան» Հիմնադրամը Շարունակում է Աջակցել Հայաստանի Ազգային Գրադարանին



Օրերս «Հայաստան» համահայկական հիմնադրամն իր արգենտինահայ բարերար Յովսէփ Թահթայի ֆինանսաւորմամբ սըրւըր եւ 5 համակարգիչ է նուիրաբերել Հայաստանի Ազգային գրադարանին: Ձեռք բերուած սարքաւորումները կը համալրեն գրադարանի տեխնիկական բազան, կ'ընդլայնեն տպագիր տեղեկատուութեան թուայնացման ու պահպանման հնարաւորութիւնները գրադարանում:

«Անցեալ տարի, երբ պարոն Թահթան այցելեց գրադարան, մեծ յուզմունք ապրեց՝ տեսնելով, որ թուայնացուող պարբերականներից մէկը Պոլսում լոյս տեսնող այն թերթն էր, որն իր մանկութեան տարիներին հայրն ընթերցում էր

տանը: Մեր հայրենակիցը որոշեց շարունակել 2013թ.-ի իր գեղեցիկ նախաձեռնութիւնը, ինչի շրջանակներում գրադարանին նուիրաբերել էր այնքան անհրաժեշտ տեխնիկա՝ սըրւըրը, լայնաֆորմատ սքաններ եւ 15 համակարգիչ», - պատմում է Ազգային գրադարանի տնօրէն Տիգրան Զարգարեանը եւ տեղեկացնում, որ նուիրաբերուած տեխնիկայի շնորհիւ՝ այսօր 2 միլիոն մամուլի էջ, 6650 վերնագիր գիրք /1.7 միլիոն էջ/ առցանց հասանելի է հասարակութեան լայն շերտերին:

Ներկայումս բարերարի հովանաւորութեամբ Հիմնադրամը մանկապարտէզ է կառուցում Արցախի Նորազիւղ համայնքում, Ասկերանի շրջան:

«Աւրորա»-ն Միջազգային Լուսանկարչական Մրցոյթ Յայտարարած է

«Աւրորա» մարդասիրական նախաձեռնութիւնը միջազգային լուսանկարչական մրցոյթ յայտարարած է:

Լուսանկարները պէտք է արտայայտեն նկարողի պատկերացումները՝ մարդկային կեանքի արժեւորման, յոյսի, անձնուիրութեան եւ աւելի լաւ ապագայ ունենալու գաղափարներու մասին: Լուսանկարները կ'ընդունուին առանց ժանրային սահմանափակման:

Մրցոյթին մասնակցելու հիմնական պայմաններն են.

- Տարիք՝ մինչեւ 40 տարեկան
- Վերջնաժամկէտ՝ Մարտի 20, 2017

Լուսանկարները պէտք նկարուած ըլլան 2016թ. 1 Յունուար 2016-էն ետք:

Մասնագիտական ժիւրիի ընտրութեամբ յաղթող լուսանկարի

հեղինակին «Աւրորա» մարդասիրական նախաձեռնութիւնը պիտի շնորհէ 2500 ԱՄՆ տոլարի պարգեւ, երկրորդ եւ երրորդ տեղերը՝ զբաղեցուցած լուսանկարներու հեղինակներուն՝ 1500 եւ 1000 ԱՄՆ տոլարի պարգեւ: Լաւագոյն 5 լուսանկարներու հեղինակները կը ստանան բացառիկ հնարաւորութիւն՝ ներկայ գտնուելու 2017-ի «Աւրորա» մրցանակի յանձնման արարողութեան, Երեւանի մէջ:

Մրցումի յայտարարութեան մէջ գրուած է. «Միացե՛ք համաշխարհային մարդասիրական շարժմանը՝ ներդնելով ձեր տաղանդն ու երեսակայութիւնը լուսանկարներում, որոնք արտա-ցոլում են «Աւրորա» մարդասիրական մրցանակի ընտրութեան չափանիշները՝ խիզախութիւն, նուիրուածութիւն եւ ազդեցութիւն»:

Թուրք Լրագրողին Գեղանկարը Նուիրուած՝ Հրանդ Տինքին



CNN-ի թրքական ծառայութեան խմբագիրներէն՝ թուրք սիւնակագիր Սերտար Քորուճուն, «Ակօս» թերթի հիմնադիր եւ նախկին խմբագիր Հրանդ Տինքի մահուան 10-րդ տարելիցին ընդառաջ պոլսահայ մտաւորականի յիշատակին անոր պատկերով նկար մը գծած է եւ անոր կցուած գրառում մը տարածած է ֆէյսպուքի իր պաշտօնական էջին: Tert.am ներկայացուցած է այդ գրառումը.

«10 տարի առաջ էր... Մարդկութեան պատմութեան տեսանկիւնէն՝ կարճատեւ ակնթարթի մը, մարդու կեանքի համեմատ՝ երկար ժամանակ առաջ... 22-23 տարեկան էի... Հայերը պարզապէս՝ հարեւաններ, իսկ Հայոց ցեղասպանութիւնը՝ օսմանեան պատմութեան վիճելի էջերէն մէկն էր:

Հրանդ Տինքն ալ թուրքիոյ մէջ գործող երկու-երեք հայկական թերթերէն «այն ձախակողմ» աները գլխաւորողն էր:

Իր հետ անձամբ սովորաբար կը գրուէինք, երբ կրկին օրակարգ կը բերուէր Հայոց ցեղասպանութիւնը, այսինքն՝ 24 Ապրիլի օրերուն:

Իհարկէ, ան ինձ համար «Հրանտ» չէր այն ժամանակ, հեռախօսիս մէջ գրանցուած «Հրանդ Պէյ»-ն էր: Այսօր: Մինչեւ 19 Յունուարը...

Այս շաբաթ արդէն 10 տարի անցած կ'ըլլայ...

Շատ բան փոխուած է: Նոյնիսկ՝ իմ կեանքիս մէջ: Ես կրնայի տարբեր, շատ տարբեր մարդ դառնալ:

Շատերս կրնայինք դառնալ... Չկրցանք դառնալ...»:

Յիշեցնենք, որ պոլսահայ յայտնի լրագրող, մտաւորական, «Ակօս» թերթի հիմնադիր եւ խմբագիր Հրանդ Տինքը սպանուած է 19 Յունուար 2007-ին՝ Պոլսոյ Շիշլի թաղամասը գտնուող «Ակօս» թերթի խմբագրատան առջեւ՝ 16-ամեայ թուրք ազգայնական Օկրին Սամասթի կրակոցով:

«Սթրաթֆոր»՝ Պելառուսն ու Ղազախստանը Դէմ են ՀԱՊԿ-ի Քարտուղարի Պաշտօնին Հայաստանի Ներկայացուցչի Նշանակումը

Ամերիկեան «Սթրաթֆոր» վերլուծական կեդրոնը Հաւաքական անվտանգութեան պայմանագրի կազմակերպութեան (ՀԱՊԿ)-ի վերաբերեալ վերլուծական յօդուած հրատարակած է, որուն մէջ, մասնաւորապէս, նշուած է, թէ Պելառուսն ու Ղազախստանը պատրաստ չեն կազմակերպութեան գլխաւոր քարտուղարի պաշտօնին տեսնել Հայաստանի ներկայացուցչի:

«Արեւմուտքի 2016-ի տնտեսական եւ քաղաքական ճգնաժամը նոր հեռանկարներ բացաւ Ռուսիոյ համար, Մոսկուա ուժեղացուց իր ազդեցութիւնը յետխորհրդային տարածքին մէջ: Վերջին մի քանի ամիսներուն Ռուսիա նոր ռազմաքաղաքական համաձայնագրեր կնքեց Պելառուսի, Հայաստանի, Ղազախստանի եւ Տաջիկստանի հետ: Սակայն, Ռուսիոյ յաջողութիւնը չի նշանակէր ՀԱՊԿ-ի յաջողութիւնը, որ ի սկզբանէ ստեղծուած էր որպէս հակակշիռ ՆԱՏՕ-ին», - գրած է «Սթրաթֆոր»:

Յօդուածագիրը թուարկած է ՀԱՊԿ-ի առկայ տարածաշրջաններէն մի քանին, այդ կարգին նաեւ, որ անդամ երկիրներու դեկլարներուն երկու անգամ չէ յաջողուած համաձայնութեան գալ ՀԱՊԿ-ի նոր գլխաւոր քարտուղարի նշանակման հարցով:

Հոկտեմբերին Երեւան կայացած՝ ՀԱՊԿ-ի գագաթնաժողովն բացակայած էր Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբայեւէ, իսկ Դեկտեմբերին կայացած Սան ֆեթերսպուրկի գագաթնաժողովին՝ Ալեքսանդր Լուքաչենկօ: «Անոնց բացակայութիւնները, որոշ տուեալներով, պատահական չէին», -

նկատած է ամերիկեան վերլուծական կեդրոնը:

Ըստ հրատարակման, Ռուսիա «կարծես թէ» խոստացած է Հայաստանին, որ վերջինիս ներկայացուցչի պիտի զբաղեցնէ ՀԱՊԿ-ի գլխաւոր քարտուղարի պաշտօնը:

Անցեալ Դեկտեմբերին Սան ֆեթերսպուրկի մէջ որոշում կայացած էր, որ Նիկոլայ Բորզիւժա հեռանայ պաշտօնէն: Անոր փոխարէն գլխաւոր քարտուղարի պաշտօնակատար նշանակուած էր Բորզիւժայի տեղակալ Վալերի Սեմերիկով: «Սթրաթֆոր» կը շարունակէ՝ այդ բոլոր տարածաշրջաններու հետեւանքով կազմակերպութիւնը չի քանդուիր, սակայն «հաստատ» կը թուանայ:

Ռուս յայտնի վերլուծաբան Պաուէլ Ֆելզենգաուերը համաձայն է «Սթրաթֆոր»-ի վերլուծութեան հետ: Անոր կարծիքով եւս ՀԱՊԿ-ը պետութեան մը շուրջ ձեւաւորուած միութիւն է, նկատած է ռուս վերլուծաբանը: Անոր կարծիքով, Հայաստանի ներկայացուցչի նշանակման համար հիմնական խոչընդոտը Ղազախստանի նախագահն է, քանի որ Աստանայի համար Պաքու, յատկապէս կենսութային հարցերով, չափազանց կարեւոր գործընկեր է:

Ինչ կը վերաբերի Պելառուսին, ռուսի փորձագէտի կարծիքով, նախագահ Լուքաչենկօ եւս կը կարեւորէ յարաբերութիւնները Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ: «Սակայն, Լուքաչենկոյի համոզելը աւելի դիւրին է Մոսկուայի համար, քան Նազարբայեւի», - նկատած է Պաուէլ Ֆելզենգաուերը:

Տ. ՄԵՐՈՊ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

Տ. Մերոպ արքեպիսկոպոս Գրիգորեանը (աւագանի անունը՝ Գէորգ) ծնունդ է 1932 թ. Հոկտեմբերի 25-ին, Սիրիայի Հալէպ քաղաքում:

1939-46 թթ. նախնական կրթութիւնը ստացել է տեղի Հայկազեան հայկական վարժարանում:

1946-47 թթ. սովորել է Հալէպի Բեթել վարժարանում:

1947 թ.՝ վարժարանն աւարտելուց յետոյ, ընդունուել է Անթիլիասի դպրեվանք:

1952 թ. ձեռամբ Գերաշնորհ Տ. Դերենիկ եպիսկոպոս Փոլատեանի ձեռնադրուել է սարկաւագ:

1952 թ. համապարփակ ուսումնասիրութիւն է գրել Ստեփանոս արքեպիսկոպոս Սիւնեցու մասին, որը հրատարակուել է 1958 թ. Պէյրուսթում:

1953 թ. Յունիսիսն աւարտել է դպրեվանքը եւ Յունիսիսն ձեռամբ Գերաշնորհ Տ. Դերենիկ եպիսկոպոս Փոլատեանի ձեռնադրուել կուսակրօն քահանայ՝ ստանալով Մերոպ անունը:

1953-1956 թթ. դպրեվանքում դասաւանդել է Հայոց պատմութիւն, Գրաբար եւ Մատենագրութիւն առարկաները, միաժամանակ պաշտօնավարել է որպէս գրադարանի փոխտնօրէն, Ձեռագրատան գլխաւոր պատասխանատու եւ տպարանի տեսուչ:

1956 թ. պաշտպանել է վարդապետական թէզ «Կիրիլիոյ կաթողիկոսութեան՝ Անթիլիասի ձեռագրերի ընդարձակ նկարագրութիւնները» թեմայով՝ Աստուածածնի վերափոխման տօնին վարդապետական աստիճան է ստացել ձեռամբ Գերաշնորհ Տ. Խաղարքեպիսկոպոս Աջապահեանի:

1957-1958 թթ. Պէյրուսթի Յովակիմեան-Մանուկեան երկրորդական վարժարանում դասաւանդել է Կրօն, Գրաբար եւ Մատենագրութիւն:

1959 թ. Գալուստ Կիւլպէնկեան հիմնադրամի մրցանակ-կրթաթոշակով մեկնել է Անգլիայի Դարհըմ (Durham) համալսարան՝ հետեւելու Արեւելագիտութեան եւ աստուածաբանութեան դասընթացներին:

1959 թ. ամրանը մեկնել է Վիեննա, ծանօթացել հայ համայնքին, այնուհետեւ, 1959-61 թթ. ուսման տարիներին, եղել է Վիեննայի այցելու հոգեւոր հովիւ:

1961 թ. աւարտել է համալսարանի արեւելագիտութեան բաժինը եւ սկսել աշխատանքը «Հայ ժողովրդի մասնակցութիւնը Օսմանեան հանրային կեանքին Արեւելեան Անատոլիայի եւ Սիրիայի մէջ 1860-1908 թթ.» դոկտորական թէզի վրայ:

1962 թ. Յունուարից Ն.Ս.Օ.Տ.Տ. վազգէն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից նշանակուել է Վիեննայի հոգեւոր հովիւ:

Հանգուցեալ Սրբազանի առաջնորդութեան օրերուն աւստրահայ գաղութի թեմը վերաշխուժացաւ: Նոր թափ ստացաւ Վիեննայի ազգային, եկեղեցական, մարզական ու մշակութային կեանքը: Առաւել եւս սերտացան հայրենիք-սփիւռք յարաբերութիւնները: Իր նախաձեռնութեամբ Եւրոպայի քրիստոնեայ տարբեր յարանուանութիւններ եւ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցոյ միջեւ համագործակցութեան նոր հանգրուան մը

բացուեցաւ: Իսկ շրջանի մտաւորականութիւնը մօտէն ծանօթացաւ ոչ միայն Հայոց. Եկեղեցու, այլեւ մեր ժողովրդի պատմութեան ու անոր անժամանցելի դատին:

1964 թ. Յունիսիսն ստացել է արեւելագիտութեան դոկտորի գիտական աստիճան: Նոյն թուականի Յունիսիս կազմակերպել է Վիեննայի Ս. Հովսիսիմէ եկեղեցու հիմնօրհնէքը:

1964 թ. Սրբազանը ակտիւօրէն գործակցել է կարդինալ Ֆրանց Կիրիլիի կողմից հիմնադրուած «Պրօ Օրիենտէ» կազմակերպութեան հետ: Նոյն թուականին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում՝ ձեռամբ Վազգէն Ա. Կաթողիկոսի, ստացել է ծայրագոյն վարդապետի աստիճան:

1964-74 թթ. եղել է Մայր Աթոռի պաշտօնական ներկայացուցիչը Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդում:

1964-78 թթ. միաժամանակ հովուել է Յունաստանի հայ համայնքին:

1969 թ. պաշտօնապէս նշանակուել է «Պրօ Օրիենտէ» աստուածաբանական խորհրդատու եւ Մայր Աթոռի ներկայացուցիչ:

1979 թ. Սրբազան Հայրը նշանակուել եւ 1980 թ. Յունուարին հայրապետական կոնդակով հաստատուել է որպէս Կեդրոնական Եւրոպայի եւ Շուէտիայի հայրապետական պատուիրակ:

1980 թ. վազգէն Ա. Հայրապետի կողմից նշանակուել է Հայ Եկեղեցու կանոնադրութեան մշակման յանձնախմբի անդամ:

1986 թ. Սեպտեմբերի 21-ին, ձեռամբ երջանակալի շատակ վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ձեռնադրուել է եպիսկոպոս:

1992 թ. 60-ամեակի առթիւ ստացել է արքութեան պատիւ:

2002 թ. Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից 70-ամեակի առթիւ պարգեւատրուել է Հայ Եկեղեցու «Ս. Ներսէս Շնորհալի» շքանշանով:

2003 թ. Հոկտեմբերի 5-ին քահանայական ձեռնադրութեան 50-ամեակի առթիւ պարգեւատրուել է Հայ Եկեղեցու «Ս. Սահակ-Ս. Մերոպ» շքանշանով:

1981 թուականից Վիեննայի Համասարանի Բիւզանդա-գիտութեան բաժնում Մերոպ Սրբազանը դասաւանդել է «Հայ ժողովրդի քաղաքական պատմութիւն» եւ գրաբար, դասախօսութիւններ կարդացել «Հայ միջնադարեան մատենագրութեան» թեմայով, «Քրիստոսաբանական վէճեր Բիւզանդական կայսրութեան մէջ» թեմաներով: 1986 թ. Վիեննայի համալսարանը Սրբազան Հօրը շնորհել է պրոֆեսորի կոչում:


Սրբազան Հայրը հեղինակ է մի շարք գրքերի, առանձին ուսումնասիրութիւնների եւ յօդուածների («Ստեփանոս արքեպիսկոպոս Սիւնեցի» ուսումնասիրութիւնը, «Հայ ժողովրդի մասնակցութիւնը Օսմանեան հանրային կեանքին Արեւելեան Անատոլիայի եւ Սիրիայի մէջ 1860-1908 թթ.» դոկտորական աշխատանքը, գերմաներէնով «Ֆրանց Վերֆել եւ Կոմիտաս» գիրքը եւ «Հայ Եկեղեցին» ուսումնասիրութիւնը, «Հրատարակիչ վանանդեցիները» եւ «Սեբէոս պատմիչի գրքի վերականգնման մասին» ուսումնասիրութիւնները, 6 հատոր Կրօնի դասագիրք):

Հետաքրքրուած եմք իրենց փոխարժեքով ստանալ՝

- Հայկական երգարաններ
- Կիլիկիոյ պատմական գիրքեր
- Ցեղասպանութեան հետ առընչուած գիրքեր

Եթէ ունիք նման գիրքեր եւ կը փափաքիք զանոնք վաճառել, կը խնդրենք մեզի հետ կապ հաստատել հեռաձայնելով կամ e-mailով՝ **ՎԱՀԷ ԱԶԱՊԱՀԵԱՆԻՆ:**

Vahe Atchabahian
1743 E. Elizabeth St. • Pasadena, CA 91104
Tel: 626-354-5924
vamedia@yahoo.com



ԻՆՉՊԵՄ ԶԱՆԳԱՏԱՑՆԵԼ ՁԻՂԵՐԸ ԲԱՆԻ ՄԸ ԱՐԴԻԻՆԱԻՏ ՄԻՋՈՑՆԵՐ

Ամենապարզ կանոնը: Հաշուեցե՛ք մինչև տասը: Ասիկա ամենապարզ ու տարածուած կանոնն է, որ կ'օգնէ ակնթարթօրէն հանգստացնելու ջիղերը: Ինչպէս նաեւ, հետեւեցե՛ք ձեր շնչառութեան: Շնչեցե՛ք դանդաղ եւ խոր: Ցանկալի է նաեւ շնչառութեան հետեւիլ այս բառերով՝ շունչ, հանգիստ, արտաշունչ: Կը հանգստացնենք ջիղերը թարմ օդի միջոցով: 10 վայրկեան տեւողութեամբ զբօսանքը մաքուր օդի մէջ կրնայ կախարդական ազդեցութիւն ունենալ ձեր ջիղային համակարգին վրայ: Ձեր մէջը կուտակուած բացասական յոյզերն ու ուժը փոխանցեցե՛ք բնութեան: Ձեռքերով դպչեցե՛ք ծառերուն, անոնց «պատմեցե՛ք» ձեր խնդիրները, մտահոգութիւնները եւ լեցուեցե՛ք դրական ու առողջ ուժով: Ամէնօրեայ վազքն ու զբօսանքը մաքուր օդի մէջ կը բարելաւէ ձեր ջիղային համակարգը: Յատկապէս օգտակար է մաքուր օդի մէջ զբօսնել քնանալէ առաջ. ասիկա պիտի ապահովէ ձեր առողջ ու խոր քունը: Առողջ ու լիարժէք քունը ամենալաւ դեղն է: Ոչինչ ըրէ՛ք ձեր քունի հաշտին: Առողջ քունը առողջ ջիղային համակարգ ունենալու առաջին նախապայմանն է: Երբ կը զգաք, որ ամէն ինչ դէպի վատը կ'երթայ, պարզապէս քնացե՛ք: Ասիկա պիտի օգնէ կատարուածին այլ աչքերով նայելու:

Երաժշտութիւն: Երբ ջիղերը ծայրայեղօրէն լարուած են, խորհուրդ կը տրուի երաժշտութիւն լսել: Պարտադիր չէ, որ անիկա դասական ըլլայ, թէեւ դասական երաժշտութեան ազդեցութիւնը անհամեմատ աւելի ուժեղ եւ առողջարար է:

Լսեցե՛ք ձեր սիրելի երաժշտութիւնը, դարձե՛ք երաժշտութիւն, որոշ ժամանակով կտրուեցե՛ք ձեր խնդիրներէն:

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ Կ'ԱՍՐԱՊՆԴԷ ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆԸ

Ընկերային լաւ յարաբերութիւնները կը պարզեւեն ոչ միայն դրական զգացումներ, այլեւ կ'ամրապնդեն առողջութիւնը:

Նման եզրակացութեան հասած են Հիւսիսային Գարուիսայի համալսարանի հետազոտողները: Հոգեբան Պարպարա Ֆրեյտերիքսընի գլխավորութեամբ գիտնականները ուսումնասիրած են իրենց բաժանմունքի եւ համալսարանի 65 աշխատակիցներու վիճակը:

Անոնց մօտ կէսը մասնակցած է յատուկ meditation-ի (խոկումի), որուն ընթացքին անոնցմէ խնդրած են մտածել իրենց ու մտերիմներու մասին, ընդ որուն՝ բացառապէս դրական բաներ:

Նման ժամային փորձերը կատարուած են ամէն շաբաթ՝ մէկուկէս ամսուան ընթացքին: Բացի այդ, կամաւորներուն առաջարկած են ճնշուած իրավիճակներու մէջ լինել մտերիմները:

Պարզուած է, որ meditation-ի մասնակցածները աւելի շատ դրական իրավիճակներ կ'ապրին, իսկ թափառող ջիղը՝ կը սկսի աւելի լաւ գործել:

«Գլխաւոր եզրակացութիւնը այն է, որ մենք ի վիճակի ենք փոխելու որեւէ ֆիզիքական բան մարդոց առողջութեան մէջ՝ մեծցնելով դրական զգացումներու ամէնօրեայ չափաբաժինը: Ու ասիկա կ'օգնէ մեզի լուծե-

Ծիծաղը կրնայ հրաշքեր գործել: Շատ կարեւոր է նոյնիսկ ամենալարուած ու ջիղային վիճակներու մէջ չկորսնցնել կատակի զգացումը: Փորձեցե՛ք ծիծաղիլ ձեր իսկ խնդիրներուն վրայ, այդ ամէնուն կատակով նայել: Օգտակար է նաեւ ծիծաղեցնող հաղորդումներ ու շարժանկարներ դիտելը: Անոնք կրնան օգնել ձեզի այլ աչքերով նայելու խնդիրներուն եւ լուծմաննոր եղանակներ յառաջ բերելու: Ծիծաղեցե՛ք, նոյնիսկ եթէ ծիծաղելու տրամադրութիւն չունիք:

Կարեւոր են նաեւ դեղաբոյսերն ու լոգանքը: Դեղաբոյսերէ պատրաստուած թէյ խմելը իսկական նուէր է ձեր ջիղային համակարգին համար: Եթէ դուք գերլարուած վիճակի մէջ էք, ընդունեցե՛ք հանգստացնող իւղերով լոգանք: Միայն ջուրը արդէն իսկ բաւական է փրկուելու համար բացասական ուժերէն:

Հետաքրքրական խօսակցութիւն: Խօսակցութեան, շփման միջոցով դուք կրնաք ոչ միայն հանգստացնել լարուած ջիղերը, այլեւ հասկնալ դուք ձեզ, ձեր խնդիրը տեսնել այլ լոյսի տակ:

Հոգեբանները յաճախ կը դիմեն նոյնինքն խօսակցութեան միջոցով բուժման օգնութեան: Մարդը, քանի մը անգամ պատ մելով իր խնդիրը, կը սկսի գայն ընկալել ուրիշ կերպով, լուծումներ գտնել: Ձեր խօսակցիցը կրնայ ըլլալ նաեւ սիրելի օրագիրը:

Օրագիր պահեցե՛ք, գրեցե՛ք այնտեղ ձեր մտահոգութիւններն ու խնդիրները, լուծումները կը յայտնուին իրենք իրենց: Շատ օգտակար է նաեւ գրուցել անծանօթ մարդոց հետ: Անոնց հետ մենք սովորաբար աւելի անկեղծ ենք: Զրուցեցե՛ք այն մարդոց հետ, որոնց հետ հաւանաբար այլեւս երբեք չհանդիպիք:

Լու շատոնց գոյութիւն ունեցող գաղտնիքը, քանի որ մեր զգացումներն ու զգացմունքները կ'ազդեն ֆիզիքական առողջութեան վրայ», - ըսած է Ֆրեյտերիքսընը:

Քարերու մոգական ուժը Զմրուխտը, եթէ դրուած է մահճակալին վերեւը, կը բուժէ մեղմադճատութեան, կը պաշտպանէ միջաւաններէն, կը հանգստացնէ սրտի աշխատանքը եւ հեռու կը վանէ թախիծը:

Զմրուխտը նաեւ կը բարելաւէ լիշողութիւնը, կը համարուի հարստութիւն բերող քար, իսկ ան, որ որ գայն կը դնէ լեզուի տակ, ձեռք կը բերէ պայծառատեսին բնորոշ յատկութիւններ: Մեր նախնիները համոզուած էին, որ գմբուխտին երկար նայելով՝ կարելի է բարելաւել տեսողութիւնը:

Մեղեհիկը (ամեթիստ) կը սթափեցնէ հարբածութենէն, կը ցրուէ վատ միտքերը, բարի յոյզեր կ'արթնցնէ եւ յաջողութիւն կը բերէ: Զուրը, որուն մէջ կը գնեն այս քարը, կը բուժէ անպտուկութիւնը: Կը պաշտպանէ գինուորականները, յաղթելու ուժ կու տայ:

Յակինթը կ'օգնէ սրտի ուժեղ բաբախումներու ժամանակ եւ սրտի թուլութեան պարագային, կը մաքրէ հոգին, ներդաշնակութիւն կը բերէ: Անիկա կը պաշտպանէ ժանտախտէ: Եթէ կուրծքով կերակրող մայրը կը կրէ յակինթ գարդ, անոր կաթը չի կտրուիր:

ԵՐԲ ՊԵՏՔ Է ԶԻՋՈՒՄ ԿԱՏԱՐԵԼ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆ ՄԵՋ

Յարաբերութիւններու յաջողութեան եւ որակին մէջ մեծ եւ հիմնական դեր կը խաղան գիշումները, ըլլան անոնք կեանքի ճակատագրական որոշումներու կամ առօրեայ փոքր դէպքերու պարագաներուն: Միայն յարաբերութիւններու մէջ կարեւոր է որ գիշումները ըլլան փոխադարձ եւ ոչ միակողմանի: Երբ անձ մը պատրաստ ըլլայ գիշելու, կը նշանակէ որ ան նուիրուած է յարաբերութեան եւ լուրջ մօտեցում ունի անոր նկատմամբ:

Սակայն միշտ չէ որ գիշումները դրական ազդեցութիւն կ'ունենան յարաբերութեան վրայ: Կարգ մը պարագաներու, գիշումը կրնայ նեղութիւն պատճառել գիշող անձին, մանաւանդ երբ կողակիցը չկարենայ գնահատել անոր այդ քայլը: Հոգեբանութեան ծիրէն ներս մասնագէտներ խորհուրդ կու տան գիշումներ կատարել լաւ տրամադրութեան մէջ:

Խօսքը ուղղելով առօրեայ փոքր գիշումներուն, երբ մեր կողակիցը յոգնած վերադառնայ տուն, հաւանաբար կը մտածենք կատարել իր պարտականութիւնները: Այս մէկը շատ հաճելի կրնայ ըլլալ թէ՛ մեզի եւ թէ՛ մեր կողակիցին համար: Սակայն ի՞նչ կրնայ պատահիլ, երբ մենք եւս յոգնած ըլլանք: Այս պարագային կրնայ գիշումը պարտականութեան վերածուիլ եւ

կորսնցնել իր իմաստն ու խորքը: Իսկ երբ կողակիցը իր անտրամադրութեան կամ յոգնածութեան պատճառով չկարենայ գնահատել մեր կատարածը, հարցը աւելի կը բարդանայ:

Յարաբերութեան ընթացքին, ճիշդ ժամանակին ճիշդ որոշումներ առնելը եւ գիշումներ կատարելը կ'օգնէ, որ երկու անձերը աւելի մտերիմ դառնան եւ նոյն ձեւով արժեւորեն իրենց յարաբերութիւնը: Զիշումները պատճառ կը դառնան, որ անձերը աւելի կապուին իրար եւ հանդուրժողական մօտեցում ունենան իրարու հանդէպ, որ իր կարգին կը բարձրացնէ յարաբերութեան որակին մակարդակը:

Միշտ շնորհակալ եղէ՛ք իւրաքանչիւր օգնութեան համար, այդ մէկը ընկերներ ձեռք բերելու լաւագոյն միջոցն է:

Մի՛ գովէ՛ք ձեր կրթութիւնը, նախկին ձեռքբերումները եւ բազմաթիւ շրջագայութիւնները. այդ բոլորը ժամանակի ընթացքին կ'իմացուին:

Կատարեցե՛ք այն ամէնը՝ զոր խոստացած էք: Եթէ չէք կրնար, ըսէ՛ք այդ մասին:

Ձեր գլխաւոր նպատակը պէտք է ըլլայ դառնալ հաւաքական խմբակի անդամ, ոչ թէ անոր առաջնորդը:

Աշխատանքի եկէ՛ք գործի ժամուն եւ ոչ թէ ուշացումով:

ՏԱԳՆԱՊԱՅԻՆ ՎԻՃԱԿԵՆ ԻՆՔՆԻՐԵՆ ԴՈՒՐՍ ԳԱՆՈՒ ԴԻՆԳ ՄԻՋՈՑՆԵՐ

Արդէն շատ ուշ է, բաւական ժամանակ է, որ կը փորձէք քնանալ եւ չէք կրնար, կը մտածէք օրուան ընթացքին տեղի ունեցածներուն մասին, եւ սրտին մէջ տեսակ մը վախ կայ, անհանգստութիւն... Կը կարծենք, որ նկարագրուածը ծանօթ է կամ կեանքի որեւէ փուլին հանդիպած է իւրաքանչիւրին: Յաճախ պատահող այս սթրեսային վիճակէն ազատիլ կարելի է շատ դիւրին ձեւով:

Պէտք է պարզապէս քիչ մը աշխատիք դուք ձեր վրայ: Ահա-լասիկ հինգ ամենաարդիւնաւէտ միջոցները:

1. Դուք ձեզի բարձրաձայն այնքան անգամ պատմեցե՛ք յուզող իրադարձութեան մանրամասնութիւնները, մինչեւ որ դառնայ ծիծաղելի եւ զգաք անիմաստութեան աստիճանը: Առճակատումը շատ լաւ տարբերակ է. խնդիրը կարծես կը հասկնայ, որ դուք այլեւս չէք վախնար իրմէ եւ կը սկսի նահանջել:

2. Պահ մը մտածեցե՛ք, որ ամէն ինչ կրնար աւելի վատ ըլլալ:

Երբ գիտակցիք ատիկա, վերադարձե՛ք իրականութիւն: Պիտի

հասկնաք, որ իսկական կատարուածը այնքան ահաւոր չէ, որքան դուք գայն կը դարձնէք ողբերգական, յատկապէս որ կիրքերուն համար ատիկա շատ բնորոշ է:

3. Յատք կատարեցե՛ք ժամանակի մէջ: Երբ ամէն ինչ անյույս կը թուի, փորձեցե՛ք մտքով տեղափոխուիլ որոշ ժամանակ առաջ եւ հասկնալ, թէ կատարուածը ինչ նշանակութիւն պիտի ունենայ ձեզի համար, ըսենք, մէկ տարի յետոյ: Դուք պիտի զգաք՝ այն ինչ որ ցաւ կը պատճառէ այսօր, վաղը կրնայ ծիծաղ յառաջացնել:

4. Տաքնապի պահուն մի մոռնաք շնչառութեան մասին: Թուլնալու կարողութիւնը ձեր մէջ դաստիարակելու համար օգտակար կրնայ ըլլալ մտախոհութեան (meditation) ճանապարհը:

5. Թոյլ մի տաք, որ խնդիրները խանգարեն ձեզ ապրելու լիարժէքօրէն: Ամէն ինչ, որ կը խանգարէ ձեզ, յաճախ փոքրիկ, նոյնիսկ, աննշան բան մըն է: Թոյլ մի տաք, որ անիկա խլէ ձեր ապրելու ժամանակը. անիկա առանց այդ ալ շատ քիչ է:

Պատրաստեց՝ ՆԱՐԻՆԷ Ն.

ՆՈՒՐԱՏԻՈՒԹԻՒՆ
 «Մասիս»ի հաւատաւոր ընթերցողներէն մի ոմն կը շնորհակարտ թերթի աշխատակազմի Նոր Տարին եւ Մ. Ծնունդը: Առ այդ 100 տոլար կը նուիրէ «Մասիս»ի բարգաւաճման ֆոնտին:

Ձեր Ծանուցումները Վստահեցեք «Մասիս» Շաբաթաթերթին
 T: (626) 797-7680 massis2@earthlink.net

ԱՐԱՐԵԿԵԱՎ, ԹԵ՞ ԱՐԱՐԵԿԻՉ ԹՈՒՐՔԻԱՆ

Շարունակուած էջ 7-էն

անապահովութիւն կը ստեղծէին երկրին մէջ»:

Մզկիթներու մէջ էրտողանի բարեկամ մոլլաները երբ կը խօսէին «կիւրմուր»ներու մասին եւ կը քննադատէին անոնց, որոնք պիտի տօնէին Նոր Տարին Ուրբաթին յաջորդ օրը (Շաբաթ գիշեր, երբ պատահեցաւ ջարդը «La Reina» գիշերային ակումբին մէջ), որքանո՞վ արդեօք մեղսակից կամ գործակից չէին այն ասաւոր ոճիւրին, որ գործադրուեցաւ այդ ակումբին մէջ Ամանորի գիշերը: Ի՞նչ երեսով արդեօք կը խօսին անոնք աշխարհին այդ ծիծաղելի բայց վտանգաւոր «Տիւնէթ»-ին յորդորը արձակելէն ետք, ըսելու թէ իրենք կը դատապարտեն այդ անապահովութիւնը: Ի՞նչ փաստ կը պակսի մարդս համոզելու, թէ այդ ոճիւրին մէկ օր առաջ մզկիթներու մէջ մոլլաներուն կողմէ տրուած գրգռիչ քարոզները, որոնք կ'ըսէին թէ Նոր Տարին տօնելը մեղք է, - չծառայեցին որպէս դրդում՝ անապահովին կամ անապահովներուն, որպէսզի Նոր Տարին թուրքիոյ մէջ արեւնով թաթախուէր:

Ոճրագործին կամ ոճրագործներուն կողմէ յաջողութեամբ պսակ-

ուած անապահովութիւնը եւ անոնց փախուստ տալը կ'ենթադրէ, թէ հանրային մեղսակցութիւն կայ կատարուածին մէջ, ճիշդ այնպէս՝ երբ անյայտ ոճրագործներ ետին կը կանգնէին Հրանդ Տիւնէթի սպանութեան: Էրտողան իր մատին ետեւ կը պահուէր, երբ աշխարհին կ'ուզէ ցոյց տալ, թէ ինք գոհ է անապահովութեան: Բռնատիրութիւնը, որուն պատճառաւ յառաջ կու գայ անապահովութիւնը, կը կիրարկուի այսօր թուրքիոյ մէջ ընդդէմ բոլոր փոքրամասնութիւններուն: Պետական անապահովութեան համագոր աշխատանք կը տարուի այսօր ազգայնական քիւրտներուն դէմ, որոնք թուրք կոչուիլ չեն ուզեր, եւ քրիստոնեաներուն դէմ, որոնք իրենց վարժարաններուն մէջ Նոր Տարի կ'ուզեն տօնել: Հայագրի երեսփոխան Կարօ Փայլան քաջութիւնը ունեցած էր թրքապետ փարլամենթին առջեւ քննադատելու պետական արգելքը, որ դրուած էր հայ վարժարաններուն մէջ կազմող պապայի եւ Նոր Տարուան միջոցառումներու դէմ: Էրտողանեան անապահովութիւնն ու իսլամական Պետութեան անապահովութիւնը մէկ դրամի երկու երեսները կը ներկայացնեն: Եւ այդ դրամը շրջանառութեան դրուած է թուրքիոյ մէջ:

ՅԻՇԱՏԱԿԻ ՄՇՏԱՎԱՌ՝ ՍԱՐԳԻՍ ՏԵՐՈՒՆԻ

Շարունակուած էջ 14-էն

մահաւանդ՝ ճշմարտախօս էր, անհանդուրժելի՝ խաւար ու մութ ուժերու համար:

Այսօր, խոնարհելով գաղափարի ուժով Ս. Տերունիի մշտավառ չիշատակին առջեւ, կ'ուխտենք անշեղօրէն ընթանալ անոր ոռոգած շաւիղէն: Ժամանակի փոշին թօթափելով, կը դիմենք անոր՝ այս գաղափարաթափ

օրերուն, իրմէ ստանալու այն կենսաւիշտ, որ մեզի պիտի պահէ ու պահպանէ ամէն տեսակի խորշակներու դէմ: Ինչքան կարիքը կը զգացուի նման հաւատաւորներու, քանզի նիւթապաշտութիւնը իր ժանիքներուն մէջ կ'լանած է երիտասարդութեան ճիղմ հոգիները քիչ մը ամէնուր:

Յարգանք գաղափարի հսկայ՝ Սարգիս Տերունիին: ԽՄԲԱԳՐԱԿԱՆ «ԱՐԱՐԱՏ»

Ի՞ՆՉ ԿԸ ՍՊԱՍՈՒԻ ԵՐՈՒՄԱՂԵՄԻ ՀԱՄԱՐ

Շարունակուած էջ 8-էն

սօր կը պատկանին անցեալին: Անցնելով պաղեստինեան կողմին, հարկ է նշել, որ այս առաջին դէպքն էր, ուր նախագահ Մամուտ Ապպասի հովանաւորութեամբ գործող կառավարութիւնը կը հրաժարէր մեկնաբանելէ եղած դէպքը: Աւելին, տարբեր առիթներով նման դէպքերու մասին քննադատական հայեացքներ ունեցող Բամալլայի կառավարութիւնը կը նախընտրէր լուռ մնալ: Ու այդ լուռութեան դիմաց վարչապետ Նաթանիասու կը յայտարարէր, որ տանելի չէ պաղեստինեան կառավարութեան կրակակիւղ կեցուածքը: Միւս կողմէ, Կազալի մէջ իշխանութիւն ունեցող «Համաս»ն ու մի քանի «ուստիքալ» գիւղերական թեւեր կ'ողջունէին եղածը եւ արարքը կը համարէին հերոսական: Իսկ արտերկրի (Պաղեստինէն դուրս) պաղեստինեան թեւերն ու «Համաս»ի համակիր մամուլը օրկանները կը յայտարարէին, որ եղածը լաւագոյն պատասխանն է այն բոլոր մարդոց, որոնք վստահ են, որ պաղեստինեան դատը մահացած է եւ կը մնայ որո շէլ այդ դատի թաղման վայրն ու թուականը: Ամէն պարագայի յայտնի է նաեւ, որ ներպաղեստինեան ճակատին վրայ բաւական մեծ շփոթի իրավիճակ մը կայ: Ու այդ վիճակը պայմանաւորուած է ոչ միայն Համաս-Ֆատիհ լարուածութեամբ կամ Ֆատիհ ներքին տարակարծութիւններով, այլ անով, որ պաղեստինցիք լուրջ ծրագրի պակաս ունին: Գոյութեան տագնապ պիտի չըսէի, այլ՝ ընելիքի ու մանաւանդ ծրագրի տագնապ: Մինչ Բամալլայի կառավարութեան համար հիմնական հարցը ԱՄՆ-ի դեսպանատան թէլ Աւիւէն Երուսաղէմ փոխադրուելու եւ բանակցութիւններ սկսելու հարցն է, անդին Կազալի մէջ Համաս կը դիմագրաւէ լուրջ խնդիրներ: Ժողովուրդին մօտ անգործութեան աճ, կենսամակարդակի անկում, ամենանախնական պայմաններու բացակայութիւն եւ առողջապահական ոլորտին մէջ լուրջ եւ երեւելի բացթողումներ: Ճիշդ է որ Համաս կը շարունակէ գիւղեր, բայց եւ այնպէս, անցնող ամիսներուն «BBC» կայանին կողմէ կատարուած հարցախոյզ մը ցոյց կու տայ, որ Կազալի երիտասարդութեան ութ-

սուն առ հարիւր պատրաստ է արտագաղթելու, եթէ յարմար առիթ ունենայ ...

Ուրեմն, որո՞ւն համար կը գիւղերի «Համաս» եւ ի՞նչ հեռանկար կամ ծրագիր ունի վերելքի նոր փուլ մը ստեղծելու Կազալի համար: Ամէն պարագայի, աւարտելով քաղաքական գալիք գործընթացներուն մասին մեր շեշտադրումը, պէտք է հասկնալ, որ արաբ-իսրայէլեան հակամարտութեան համար խիստ կարեւոր է երկրին ղեկը նոր ստանձնած ամերիկեան ղեկավարութեան մօտեցումը: Մինչեւ այս պահը նախագահ Տանըլտ Թրամը յստակ ձեւակերպումներ չունի պաղեստին-իսրայէլեան հարցին վերաբերեալ: Ճիշդ է, որ ան քանի մը առիթներով դրական նշաններ դրկած է թէլ Աւիւէն, բայց այդ մէկը բաւարար չէ ամերիկեան «նոր» կեցուածքին ամբողջական պատկերը հասկնալու համար: Բոլորին համար, ե՛ւ պաղեստինեան, ե՛ւ իսրայէլեան կողմին հա մար ալ վճռորոշ դեր պիտի ունենայ ամերիկեան կեցուածքին երեւումը, ու ատկէ ետք է միայն, որ կարելի պիտի ըլլայ խօսիլ բանակցութեանց ճակատագրին կամ այլ օրակարգերու մասին: Ամէն պարագայի, պէտք է յստակօրէն ընդգծել, որ Երուսաղէմ քաղաքը հանգիստ չէ: Անոր աւագներուն տակ մոխիրի մէջ պահուած կրակ կայ ու շատ հնարաւոր է, որ այդ կրակը արագ կերպով համատարած բախումներու նոր հանգրուան մը թեւակոխէ: Երկու կողմերը գիրար կը շարունակեն ատել եւ երկու կողմերուն մէջ ալ ծայրայեղական մօտեցումները ղեկը ստանձնելու ուժ ունին: Պաղեստինեան կողմին մօտ տագնապը աւելի սուր դրոյթներով կրնայ երեւնալ, որովհետեւ անոնք որ Երուսաղէմի փո ղոցներուն մէջ դաշունահարումներ կ'ընեն կամ թէ իրենց բեռնատար կառքերով իսրայէլացի գիւղերներ կը սպաննեն, այդ արարքները կը կատարեն յուսահատական շեշտով մը: Անձնասպանութիւնը յուսահատութեան արգասիքն է ու այս առումով է նաեւ, որ մտահոգիչ աստիճաններու կրնայ հասնիլ պաղեստինեան կողմին անգապելի մոլուցքը, որ հետեւանք է իսրայէլեան կողմին կիրառած ծանրագոյն ճնշումներուն:

OFFICE SPACE FOR RENT IN PASADENA
ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave
Pasadena, CA 91104
Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով
Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝
(626) 398-0506

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՀ
ՓԱՍՍԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ՀԱՄԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՆԵՐ՝
ՀԵՌԱՉԱՅՆԵԼ (626) 797-7680

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
Enclosed a check for (one year)

* \$50,00 * \$100,00 (first class) for USA
\$ 125,00 (Air Mail) for Canada.
\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: _____
Address: _____
City: _____ State: _____ Zip Code: _____
Country: _____
Tel: _____ Email: _____

ԻԲՐԱՅԻՍՈՎԻՉԻ ԿՈՆԸ ՓՐԿԵՑ «ՄԱՆՉԵՍԹԵՐ ԵՆԻՆԱՅԹԸՏԻՆ» ՊԱՐՏՈՒԹԻՒՆԻՑ



Անգլիայի առաջնութեան 21-րդ տուրում «Մանչեսթեր Եունայթեթը» ընդունեց «Լիւերպոլը»։ Գրանցուեց ոչ ոքի՝ 1:1: Հանդիպման հաշիւը բացեցին հիւրերը: Սեփական տուգանային հրապարակում ձեռքով խաղաց «Մանչեսթեր Եունայթեթը» եւ Ֆրանսայի հաւաքականի կիսապաշտպան Պոլ Պոզբան: Ջեյմս Միլները դիպուկ իրացրեց 11 մեթրանոցը:

Պորտուգալացի ժողէ Մոուրինիոյի գլխավորած թիմին պարտութիւնից փրկեց շուէտ յարձակող Ջլատան Իբրահիմովիչը, որը վերջնամասում աչքի ընկաւ գլխով կատարած հարուածով: «Մանչեսթեր Եունայթեթը» մեկնարկային կազմում էր Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Միխիթարեանը, որն անցկացրեց ամբողջ հանդիպումը:

Հանդիպումից յետոյ գլխավոր մարզիչ ժողէ Մոուրինիոն յայտարարել է, որ գոհ չէ արդիւնքից: «Շատ հետաքրքիր խաղ էր նոյնիսկ չէզոք երկրպագուների համար: Բայց չեմ կարծում, որ այս խաղը ֆուտպոլի որակով ամենաբարձր մակարդակի էր: Մենք պայքարեցինք մինչեւ վերջին վայրկեանը: Մրցակիցը գործում էր խելացի: Նրանք գիտեն՝ ինչպէս խաղալ ֆուտպոլ եւ ինչպէս վերահսկել յոյզերը խաղի ընթացքում: Նրանք գիտէին, որ վերջին րոպէներին ծանր է լինելու:

«Մանչեսթեր Եունայթեթը» գրոհում էր, «Լիւերպոլն» ընդամենը պաշտպանուում էր: Ես հաւանեցի մեր թիմի խաղը, սակայն արդիւնքից հիասթափուած եմ», - Մոուրինիոյի խօսքը մէջբերում է BBC-ն:

1:1 հաշուով խաղից յետոյ «Լիւերպոլը» 45 միաւորով բարձրացաւ երրորդ տեղ: Նոյնքան միաւոր ունի նաեւ երկրորդ տեղում ընթացող Լոնտոնի «Տոտենհեմը»: «Մանչեսթեր Եունայթեթը» 40 միաւորով 6-րդն է: Առաջատար «Չելսին» ունի 52 միաւոր:

ՅԵՆՐԻԽ ՄԻԽԻԹԱՐԵԱՆ. ՅՈՒՐԳԵՆ ԿՈՊՈՐ ՇԱՏ ԼԱՒ ՍԱՐԴ Է

«Լիւերպոլի» դէմ Անգլիայի առաջնութեան 21-րդ տուրի հանդիպումից առաջ «Մանչեսթեր Եունայթեթը» եւ Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Միխիթարեանը խօսել է «Լիւերպոլի» գերմանացի գլխավոր մարզիչ Յոուրգեն Կլոպի մասին, որի հետ աշխատել է Դորտմունդի «Բորուսիայում»:

«Մինչեւ «Բորուսիա» տեղափոխուելու մի քանի անգամ հեռախօսով գրուեցել եմ «Լիւերպոլի» այն ժամանակուայ գլխավոր մարզիչ Բրենդան Ռոջերսի հետ: Նա համոզում էր ինձ տեղափոխուել «Լիւերպոլ» եւ խաղալ Սուաբեսի ու Ջերարդի հետ: Բայց ես հասկանում էի Անգլիայի եւ Ուելսիայի ֆուտպոլի հսկայական տարբերութիւնը: Դորանից երկու շաբաթ անց ես հանդիպեցի Կլոպի հետ եւ որոշում ընդունեցի տեղափոխուել «Բորուսիա»: Գիտէի, որ նա երիտասարդ խաղացողների հետ աշխատանքի լաւ համբաւ ունի: Վստահ եմ՝ այն ժամանակ ես ճիշդ որոշում կայացրի: Կլոպը շատ լաւ մարդ է: Նա միշտ աջակցում է խնդիրներ ունեցող ֆուտպոլիստներին:

Նա շատ օգնեց ինձ, քանի որ չափազանց շատ էի մտածում ֆուտպոլի մասին: Ամէն պարտութիւնից յետոյ միտքս միայն չիրացրած հնարաւորութիւններն էին: Կլոպն ասում էր, որ սա ուղղակի կեանք է եւ դեռ շատ հնարաւորութիւններ կը լինեն: Բայց այդ շանն ունենալու համար անհրաժեշտ է լաւ տրամադրութիւն: Այն ժամանակ ես հասկացայ, որ բոլորն են սխալուում, եւ պէտք չէ շատ երկար վերապրել այդ ամէնը», - Միխիթարեանի խօսքը մէջբերում է dailymail-ը:

ՌՈՆԱԼԴԻՆԻՈՆ ԿԸ ՎԵՐՍԿԱՍԻ ԿԱՐԻԵՐԱՆ

«Բարսելոնայի» եւ Պրագիլիայի հաւաքականի նախկին աստղ Ռոնալդինիոն որոշել է այս տարի վերսկսել խաղացողի կարիերան: Այդ մասին յայտնել է 36-ամեայ ֆուտպոլիստի գործակալ Ռոբերտո Դէ Ասիսը:

«Մեր ծրագրերի մէջ է այս տարի մեծ ֆուտպոլ վերադառնալը: 2016 թուականին մենք ունէինք հնարաւորութիւն ձանապարհորդել, տեսնել տարբեր երկրներ, բայց հիմա Ռոնալդինիոն դարձեալ ցանկանում է խաղալ: Կարծում եմ՝ նա կը միանայ Լիբերտադորեսի գաւաթի խաղարկութիւնում հանդէս եկող թիմի», - Ռոնալդինիոյի գործակալ Ռոբերտո Դէ Ասիսի խօսքը մէջբերում է Goal.com-ը:

2015 թուականին ֆուտպոլիստը հեռացել էր պրագիլական «Ֆլու-մինենսեից»:

ՍԵՒԼԻԱՅԻ ՅԱՂԹԱՆԱԿԸ ՌԵԱԼԻ ՆԿԱՏԱՍԱՐ

Սպանիայի առաջնութեան 18-րդ տուրում Մադրիդի «Ռէալը» հիւրընկալուեց «Սելիւիային» եւ պարտութիւն կրեց 1:2 հաշուով: Հաշիւը բացուեց միայն 67-րդ րոպէին: Կարվախալի դէմ կանոնները խախտեց «Սելիւիայի» դարպասապահ Սերխիո Ռիկոն: 11 մեթրանոցը դիպուկ իրացրեց Կրիշտիանու Ռոնալդուն:



Վերջնամասում ինքնագոլի հեղինակ դարձաւ Արքայական թիմի պաշտպան Սերխիո Ռամոսը: Աւելացուած երկրորդ րոպէին Ստեւան Եովետիչը խփեց նաեւ յաղթական կոլը:

«Ռէալը» 17 խաղից յետոյ 40 միաւորով գլխավորում է մրցաշարային աղիւսակը եւ 2 միաւորի առաւելութիւն ունի երկրորդ տեղում ընթացող «Սելիւիայի» նկատմամբ: «Բարսելոնան» 38 միաւորով երրորդ տեղում է:

ԱՆԱՍՏԱՍԻԱ ԳԱՆՈՒՍՏԵԱՆԸ ԵՐՐՈՐԴ ՏԵՂՆ Է ԳՐԱԲԵԼ ԼԵՅԱՍԱՆՈՒՄ

Հայաստանը ներկայացնող Անաստասիա Գալուստեանը երրորդ տեղը գրաւեց Լեհաստանում անցկացուող Mentor cup-2017 գեղասահի մրցաշարում:



Կարճ ծրագրից յետոյ 17-ամեայ Գալուստեանը 59.71 միաւորով առաջին տեղում էր, սակայն ազատ ծրագրում գրանցեց երրորդ արդիւնքը՝ 150.94: Յաղթողի տիտղոսը նուաճեց 157.94 միաւոր վաստակած ֆրանսացի Լորեն Լեկավայէն, որը կարճ ծրագրից յետոյ 8-րդն էր:

ԱՄՆ-ՈՒՄ «ԱԼԱՇԿԵՐՏԸ» ԿԸ ԽԱՂԱՅ «ՌԵԱԼ ՍՈՒԹ ԼԵՅՔԻ» ԵՒ «ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍ ԿԵԼԱՔՍԻԻ» ՅԵՏ

«Ալաշկերտը» ֆետրուարի 16-27-ը ԱՄՆ-ում կայանալիք հաւաքի ընթացքում կ'անցկացնի 3 ընկերական խաղ:

Փետրուարի 18-ին Հայաստանի ախոյեանը «Վեսթմենթ» ստադիոնում կը մրցի «Լոս Անճելոս Կելաքսիի», իսկ ֆետրուարի 20-ին Կրենտէյլի «Հայքըլ» ստադիոնում կը մրցի ԱՄՆ-ի Պրեմիեր Դեվելոպմենթ լիգայի ներկայացնող «Վենտուրա Քաունտի Ֆլուժինի» հետ: Հաւաքի վերջին խաղում «Ալաշկերտի» մրցակիցը կը լինի «Ռեալ Սոլթ Լեյքը», որի կազմում խաղում է Եուրա Մովսիսեանը: Յաջորդ օրը թիմը կը վերադառնայ հայրենիք, յայտնում է ակումբի մամուլի ծառայութիւնը:

ՓԱՍՏԻՆԱՅԻ Յ.Մ.Մ.Ի ՖՈՒՏՊՈՒԼԻ ԽՈՒՄԲԸ ՅԱՂԹԱԿԱՆ

2017 թուականի ֆուտպոլի հերթական մրցումներէն առաջինը տեղի ունեցաւ Յունուարի 15ին, առաւօտեան ժամը 8:00ին, Լոս Անճելոս Կիրիֆթ զբօսայգիի մարզադաշտին մէջ: Այս առթիւ Փաստինայի Հ.Մ.Մ.ի կազմը մրցեցաւ Dinamo Internazionaleի դէմ: Մրցումն աւարտեցաւ 5 -0 արդիւնքով ի նպաստ Հ.Մ.Մ.ի:

Յ.Մ.Մ.Ի ՖՈՒՏՊՈՒԼԻ ԽՈՒՄԲԻ ՁՄԵՆԱՅԻՆ ՇՐՋԱՆԻ ՍՐՅՈՒՄՆԵՐՈՒ ՅԱՅՏԱԳԻՐԸ



) Կիրակի, 22 Յունուար, 2017ին կէսօրէ ետք ժամը 1:30ին Հ.Մ.Մ. ընդդէմ Dinamo Internazionale 6201 Balboa Blvd. Van Nuys, CA 91406

3) Կիրակի, 29 Յունուար 2017ին կէսօրէ ետք ժամը 3:40ին Հ.Մ.Մ. ընդդէմ LA CITY UNITED Rio De L.A. 1900 N. San Fernando Road, Los Angeles, CA 90065